

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ՝ 3-րդ ՅԵՎ
4-րդ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



89171 (082)

7-83

Ս. Հ. ՈՎ. ՍԵՎ. ԾՈՎ. ՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

1935



6 NOV 2011

891.71(082)

9-87

կպ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ III ՅԵՎ
IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱԶՈՎ-ՍԵՎԵՌՈՎՅԱՆ ՅԵՐԿԻՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱՆԿԶՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

1935

3517
41

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր յերկրամասի հայոց դպրոցների աշակերտութիւնը, սովորելով ոռոսաց լեզուն և գրականութիւնը, մեծ պահանջ ե գգում ծանոթանալ ոռոս և ոտարագգի կլասիկների ստեղծագործութիւններին:

Ազով-Սեւովյան Յերկրային Հրատարակչութիւնը, ընդառաջ գնալով այդ պահանջին և կամենալով տալ աշակերտների ձեռքը ոռոսաց լեզվի և գրականութեան մի ոժանդակ ժողովածու, թարգմանաբար լույս ե ընծայում հայ տարրական դպրոցների III և IV դասարանի աշակերտների համար այս Քրեստոմատիան:

Թարգմանութիւնն արված ե Ս. Մ. Բրայլովսկայայի և Մ. Ա. Ռիբնիկովայի Յ-րդ վերամշակված և ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի կողմից հաստատված Քրեստոմատիայի առաջին և յերկրորդ հատորներից:

Թարգմանութիւնը կատարել են՝ Գ. Գեվորգյան—«Մուծիկն ու աղան» և Մաքսիմ Գորկու «Մայիսի մեկը». Յե. Բաբսեղյան—Իլինի «Մեծ պլանի պատմութիւնից» Հնգամյակի հետախույզները. ֆնացած բոլոր արձակ նյութերը թարգմանել ե Հ. Բովդանյանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՁՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեզով յերկինքն առնում
գալարում է բուքը ձյան,
մերթ մանկան պես լաց է լինում,
մերթ վռնում է գերթ գազան.

Մերթ վայրենի սուլում պեսպես,
աղմկում է տանիքում,
մերթ ուշացած ճամբորդ, ասես՝
լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը, խարխուլ ու հին,
և՛ մթին է, և՛ տխուր.
— Ի՞նչ ես նստել պատի տակին,
իմ պառավս՝ եղպես լուռ:

Հոգնե՛լ ես դու փոթորիկի
վռնոցներից խելագար,
թե՞ նիրհում ես քո իլիկի
բըզզոցի տակ միտլար:

Յերգի՛ր, վո՛նց եր ապրում խաղաղ
հավքը ծովի են ափին,
յերգի՛ր, վո՛նց եր աղջիկը վաղ
ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով յերկինքն առնում
գալարում է բուքը ձյան,
մերթ մանկան պես լաց է լինում,
մերթ վռնում է գերթ գազան:

ՃՈՐՏԻ ՅԵՐԵՒԱՆԵՐՆ ՈՒ ԿԱԼՎԱԾԱՏԻՐՈՋ ՃԱՆ ԼԱԿՈՏՆԵՐԸ

(Կառապանի պատկերով)

Այ, մեր աղան՝ Պանկրատովը, զարմանալի բան է. ահա-սուռներին սիրում եր, իսկ մարդկանց հոգին եր հանում:

Շներին համար մի բուն շինեց, վոր աղայի վայել տուն եր, չէ թե բուն: Տասը հատ եղ շուն ուներ, վորոնց շատ եր սիրում. ու յերբ սրանք ցնգնում էին, իսկույն ճորտ կնիկների մեջ եր բաժանում շան լակոտներին: Որինակ, ասենք, վոր կնիկներից մեկնումեկը տղա բերեց. ուրեմն կաթ ունի, չէ. շնապահներն իսկույն կբերեն նրա մոտ մի շան լակոտ, վոր ծիծ տա, կերակրի:

Ես մեր աղան մի ճորտ ուներ, վորը նրան բահրա¹ յեր վճարում: Ալեքսեյ եր անունը: Ի՜նչ հրաշալի մարդ եր եղ Ալեքսեյը. խելոք եր, սիրուն և հաջողակ. մեկ խոսքով՝ առաջի մարդն եր ամբողջ կալվածքում: Մի ջահել կին ուներ նա: Ինքը, խոսք չկա, սիրուն տղամարդ եր ու գուլեկան, բայց կինը նրանից ել սիրուն եր, վողջ աշխարհքում վոր փնտռելիք, նրա հատը չեյիք գտնի: Աստծու կամքով նրանք կարողության տեր եյին դառել. սրանք յերկուսն ել ունեւոր ընտանիքի զավակներ եյին: Մենակ մի պակասություն ուներ եղ Ալեքսեյը—մի քիչ հպարտ մարդ եր նա: Մեկ որ ես Ալեքսեյն իր սայլով ապրանք փոխադրելու պիտի գնար, բայց նրա կինը հղի յեր: Բայց ի՜նչ արած: Մյուս սայլորդների հետ նա ճամբա ընկավ դեպի գաշտ: Գիշերը վրա հասավ, սրանք գնում են. սայլերը ճրճում են, սայլորդները, վոր ամեն կողմից հավաքված մարդիկ են, գնում են կողք-կողքի ու դեսից-դենից զրուցում: Ճամբա տեղ ե, ելի՛, կխոսեն, այ ինչպես հիմի մենք ենք խոսում. որինակ՝ պատմում են ուր և ի՜նչ ազգեր են ապրում, ի՜նչպես ե նրանց նիստուկացը և ուրիշ ես տեսակ բաներ: Ալեքսեյը սայլերի հետ գնում ե, բայց չի խոսում, ամպի պես լուռ ե: Են ժամանակ մյուսները հարցնում են սրան. «Ես ի՜նչ բան ե, ախպեր, մեզ ընկերացել ես, միասին գնում ենք, բայց հետներս խոսել չես ուզում... Չլինի՞, քու մասին մեծ կարծիքի տեր ես ու մեզ մարդատեղ չես դնում»... — «Ձե, սիրելի ընկերներս, — ասում ե

նա. — յես իմ մասին մեծ կարծիքի տեր չեմ ու ձեզ ել մարդատեղ չդնողներից չեմ: Եսպես տխուր ճամբա գնալուս պատճառն են ե, վոր տանը թողել եմ կնոջս, իսկ մեր կալվածատերը չափից դուրս գազան մարդ ե: Ծեծում են, թակում, հոգիդ բերանդ են բերում: Բայց եղ բոլորը հե՛չ, քանի վոր իմ մարմինն ե վերաբերվում: Բայց արի տես, վոր մի նոր բան ել ե հնարել. շան լակոտներին, հեռի ձեզնից, կնկա կաթով ե կերակրում»: Մարդիկ դաշտով գնում են իրենց ճամբան ու ես բանի մասին են մտածում: Գեղ հայտնի յե, վոր մարդիկ չուրում իրենց ազատ են զգում. են մարդը, վոր իր տանը, խոսքի վրա, ճորտ ե, եղ մարդն ել չոլում իրեն ազատ ե համարում: Պատահում են, իհարկե, համ ծառայող մարդիկ, համ ել պաշտոնաթող զինվորներ: Այ, եղ մարդիկ ասում են Ալեքսեյին. «Ձեր գեղի մարդիկ, յերևի, խելառներ են: Աշխարհիս ստեղծված որից ենպես որենք չի յեղել, վոր հայվան ասածդ կնկա կաթով կերակրվի»:

Ես խոսքերը խորը նստան Ալեքսեյի ուղեղում: Գնում ե նա սայլերի հետ. գետինն ասես կրակ լինի նրա վտանների տակ: Ինքն ել անդադար մտածում ե՝ ճիշտ ե, որենք չկա, եղպես որենք չկա: Լավ: Գալիս ե տուն գիշեր ժամանակ. կինը դիմավորելու դուրս չի գալիս, լույսը չի վառում. խրճիթը մութն ե, ասես՝ գերեզման լինի: Մտնում ե ներս. որորոցում յերեխայի լացի ձայն ե լսվում, անկյունումն ել շան լակոտներ են վրնկվրնկում: «Ես ի՜նչ բան ե, կնիկ»: — «Հե՛չ, ասում ե կինը, աստված մեզ վորդի պարգևեց»: «Բաս են բուժախում ի՜նչ կա»: — «Ենտեղ շան լակոտներ են, ելի՛, հո դու ինքդ ել հասկանում ես...» — «Բա դու ինքդ հասկանում ես, թե՛ չե. յես ես տեսակ բաներ չեմ կարող համբերել. բե՛ք եստեղ եղ լակոտներին»: — Վերցնում ե մեկին՝ մեկ ձեռքով, մյուսին՝ մեկել ձեռքով, ճխրտում ե, նորից տեղը դնում: «Դե, ասում ե, աղոթք արա աստծուն սարսափելի մեղքիդ համար ու վերցրու յերեխիդ: Տես, վո՞նց ե մղկտում խեղճն որորոցում»:

Առավոտը գալիս են շնապահները: «Աննա, ապա բեր եստեղ լակոտներին, տեսներ՝ առողջ են»... — «Նրանք, ասում ե, չեմ գիտում ինչո՞ւ սատկել են»: — «Ի՜նչպես, յերկուսն ել»: — «Հա, ասում ե, յերկուսն ել սատկել են»: — «Պատճառն ի՜նչ ե. ասենք եղ մեր գործը չի. կհայտնենք աղային»: Հենց եղ ժամանակ ներս ե մտնում Ալեքսեյը: «Դուք ի՜նչ գործ ունեք եստեղ, ինչի՞ յեք յեկել: Եղ որենք ե: Յերեխան որորոցում լաց ե լինում, իսկ նրա մերը շան լակոտներին պիտի ծիծ տա, հա: Կորեք

¹ Բահրա — դրամով կամ մթերքներով հարկ

եստեղից, վոր աչքս մեկ ել ձեզ, շնապահներիդ, չտեսնի»։ — «Դո՛ւ, Ալեքսեյ, շատ մի բղավի, — ասում ե շնապահներից մեկը։ Մեզ զրկողն աղան ե, նրան ել պետք ե իմաց տանք»։ Դեհ, իհարկե, գնում են ու ամեն բան պատմում են իրենց տիրոջը։ Ու ի՞նչ ես կարծում, իսկույն հրամայում ե նա են շնիկներին դնել մի քաթանի վրա, ասես մեռելներ լինեն։ Եղպես, քաթանի վրա դրած, բերում են նրա մոտ. նա ձեռքերով շոշափում ե նրանց։ «Անմեղ արարածներ, ասում ե նա, սպանված են անորենների ձեռքով», Ու լաց ե լինում։ Հետո կանչում ե շներին խոհարարներին և հրամայում ե շնանոցի համար վարսակի սպաս պատրաստել, վորքան կարելի յե պինդ։ Առհասարակ եսպես եյին անում. ամբողջ շնանոցի համար յեփում եյին քառասուն վեղորոյից և նույնիսկ ավելի սպաս. յերբ սպասը պատրաստ եր լինում, սկսում եյին կերակրել շներին. ինքն ել գալիս նստում եր աթոռին, նայում եր ու իր ձեռքով կերակրում շներին։ Ես անգամ ել գալիս, նստում ե կաթսայի կողքին. քաթանի վրա պառկեցրած լակոտներին ել դնում ե քովը։ «Կանչել Ալեքսեյին»։ Գալիս ե Ալեքսեյը։ «Տեսնո՞ւմ ես, ասում ե, անմեղ տեղն սպանվածներին»։ — «Տեսնում եմ, պատասխանում ե նա, բայց ի՞նչ կա վոր, մարդս ել, աղա, առանց պատճառի չի մեռնում, ո՛ւր մնաց հայվանը»։ — «Սրանց մահացնողը դո՛ւ յես յեղել, վայրենի»։ — «Յես նրանց չեմ մահացրել, բայց դո՛ւք եք, վոր որենքի համեմատ չեք վարվում։ Յերեխան վոր կա, թեկուզ նա ռամիկ մարդու տղա լինի, ելի աստծու համար մարդ-արարած ե, հոգի ունի։ Նա պետք ե որորոցում պառկած լինի. իսկ դո՛ւք կնկա կուրծքը շներով եք մրտառում... Ո՛ւր ե վոր նրանք բոլորն ել շան սատակ լինեյին։ Ախմախը խալին ե, վոր բոլորին միանգամից չի խեղդում...»։ Հենց վոր նա ես խոսքերն ե ասում, վեր ե կենում տեղից աղա Պանկրատովը... վեր ե կենում ու ենպես ե տալիս եզ Ալեքսեյի կրծքին, վոր սա մեջքի վրա գետին ե փռվում ու շիտակ... շիտակ կաթսայի մեջ ե խրվում գլխիվայր։ Ձայն-ծալտուն հանել չի կարողանում։

Վրա յեն հասնում շնապահները... քաշում-հանում են... բոլորովին խաշվել եր... Սկսում են աղմկել շնապահները. խռովություն ե ընկնում ծառաների մեջ։ Շնապահներից մեկն ել ես Ալեքսեյի ախպերն ե լինում... Սա շտապ վազում ե աղայի տունը... վերցնում ե հրացանը... Աղան վազում ե ծառաների մոտ, ամա սրանք ել սռաջվանը չեն, հասկանում ես, մի-մի գայլ են դառել։ Ծորտերի սիրտը բռնկվեց։

ԿԱՊԻԿԸ ՅԵՎ ԱԿՆՈՑՆԵՐԸ

Ծերացել եր կապիկը,
Լավ չեր տեսնում պապիկը.
Առավ ալնոց՝
Մի վողջ կապոց,
Ակնոցները փոքր ու մեծ՝
Ձեռքերին եսենց — ենենց՝
Մին դնում ե իր գլխին,
Մին ել պոչի մեջտեղին,
Եին լիզում ե, թքոտում,
Մին ել սրբում, հոտոտում։
Հա փորձում ե, հա փորձում,
Բայց ակնոցը չի գործում.
Են պապոուն ապակին
Լույս չի տալիս պապիկին։
— Կորչեն, — գոռաց, — ջուխտ ու կենտ.
Նա յե հիմար, նա յե խենթ,
Ով լսում ե այդ խոսքին,
Մարդկանց հազար մի ստին։
Սրանց մասին
Ինչ վոր ասին,
Սո՛ւտ ե, սո՛ւտ.
Ես ապակին
Խավար աչքին
Ի՞նչ ոգուտ։
Ու կապիկը՝
Ծեր պապիկը
Խորը վշտով ակնոցները
Ենպես խփեց չոր քարին,
Վոր ջուր կտրած փշրանքները
Կանաչ-կարմիր կապեցին։

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՊԱՐՄԱՅՈՒՍ

Ջենովայում¹ կայարանի առաջ ձգված փոքրիկ հրապարակում հավաքված ե ժողովրդի հոծ բազմություն, — գերակշռող մասը բանվորներն են, բայց լավ հագնված ու գեր մարմնով

¹ Պարմա և Ջենովա — քաղաքներ են Իտալիայում։

մարդիկ ել շատ կան: Ամբոխը գլխավորողները մունիցիպալիտետի¹ անդամներն են, վորոնց գլխին ծածանում ե քաղաքի արվեստորեն գործված մետաքսե դրոշը, իսկ սրա կողքին փողփողում են բանվորական կազմակերպությունների բաղմբանգ չորհները: Պսակում են վոսկեգույն ծոպերը, ժապավեններն ու յերիգները, պսակում են նիզակներն իրենց կոթերի վրա, խըշխշում ե մետաքսը ու կես ձայնով յերգող խմբի նման դողանջում ե հաղթանակող հանդիսավորությամբ համակված բազմությունը:

Վորպես գոգավոր կիսաշրջան կանգնած ե կայարանի հաստահողույս մարմարե շենքը, վորը տարածել ե իր թեվերն՝ ասես ուզում ե իր գիրկն ընդունել մարդկանց: Նավահանգստից հասնում ե շոգենավերի ծանր հեվոցքը, նավապտուտակի աշխատանքի խուլ ձայնը ջրում, շղթաների զնգոցը, սուլոցներ, ճչեր,—հրապարակը լուռ, որը խեղդուկ, ջերմ արեւով վողողված ե ամեն ինչ: Տների լուսամուտներում ե պատշգամբներում — կանայք՝ ծաղիկները ձեռներին, մանուկներ՝ տոնական զգեստները հագին, ասես՝ մի-մի ծաղիկ լինեն:

Կայարանին մոտենալիս շոգեկառքը սուլում ե. ամբոխը ցնցվեց. սեւթուշ թռչունների նման գլխավերելում յերեւելեցին մի քանի տրորված գլխարկներ. նվագաժողովը վերցնում են իրենց փողերը, մի քանի լուրջ կերպարանքով հասակավոր մարդիկ, իրենց արդուզարդը կարգի բերելով, առաջ են անցնում, յերեսները դարձնում դեպի ամբոխը և ինչ-վոր ասում են ու ձեռներն աջ ու ձախ շարժում:

Ծանրաշարժ կերպով և առանց շտապելու ամբոխը հետ քաշվեց, լայն անցք բանալով դեպի փողոց:

— Ո՞ւմն են դիմավորում:

— Պարմայից յեկող յերեսաներին:

Այնտեղ, Պարմայում, գործադուլ ե: Ձեռնարկատերերը չեն զիջում. բանվորների դրությունը շատ ե ծանրացել և ահա նրանք իրենց յերեսաներին, վորոնք արդեն քաղցից սկսել են հիվանդանալ, հավաքել և ուղարկել են Ջենովա, իրենց ընկերների մոտ:

Կայարանի սյունաշարքերի հետևից ընթանում ե փողերիկ մարդկանց գեղատեսիլ շքերթը. այդ յերեսաները հազնված են կիսով չափ. իրենց ցնցոտիների մեջ նրանք բրդոտ են թվում, կարծես տարորինակ փողերիկ գազաններ լինեյին: Գնում են

ձեռք-ձեռքի բռնած, շարքում հինգ-հինգ հոգի: Նրանք շատ փոքր են, փոշոտ և, ըստ յերեւույթին, հոգնած են: Նրանց դեմքը լուրջ ե, բայց աչքերը փայլում են կայտառ ու պայծառ ցոլքով, ու յերբ նվագախումբն ի պատիվ նրանց գալստյան նվագում ե Գարիբալդիի¹ հիմնը, սրանց նիհար, սրացած ու սոված դեմքերին, ուրախության մեղմիկ ծփանքի հետ, յեւրեւում ե գոհունակության ժպիտը: Բազմությունն ապագայի մարդկանց վողջունում ե խլացուցիչ կանչով: Նրանց առաջ խոնարհվում են դրոշակները, հնչում ե փողերի պղինձը, շմեցնելով ու շլացնելով յերեսաներին, — այսպիսի ընդունելությունից նրանք մի քիչ շփվել են, մի վայրկյան հետ են քաշվում, բայց ապա հանկարծ առաջ են ձգվում, շարվում, կողք-կողքի սեղմվում են վորպես մի մարմին և ապա հարյուրավոր ձայներ, բայց մեկ կրծքից հնչող ձայներ կանչեցին.

— Կեցցե՛ Խալիան:

— Կեցցե՛ յերիտասարդ Պարման, — թնդացնում ե բազմությունը՝ գրոհ տալով դեպի նրանց:

— Կեցցե՛ Գարիբալդին, — գոռում են յերեսաները, վորպես դորշագույն սեպ ներխուժելով ամբոխի մեջ ու նրա հետ ձուլվելով:

Հյուրանոցների լուսամուտներում, տների կտուրներին սպիտակ թռչունների նման թաշկինակներ են թրթռում, այնտեղից, յերեսաների գլխին անձրևի նման տեղում են ծաղիկներ և ուրախ, բարձրագույն ձայներ:

Ամեն ինչ տոնական կերպարանք ստացավ, ամեն ինչ կենդանացավ. նույնիսկ դորշագույն մարմարիոնն ել յերպներանդ բծերով գեղադարձվեց:

Յերեւում են դրոշները, թրվում են գլխարկներն ու ծաղիկները. հասակավոր մարդկանց գլուխներին մանկական փոքրիկ գլուխներ են բուսել. այս ու այն կողմ պարզվում են փողերիկ թխագույն թաթիկներ, վորոնք ծաղիկներ են վորսում և վողջունում են. ողն անդադար դղրդում ե հզոր կանչերի անվերջ թնդունից:

— Կեցցե՛ սոցիալիզմը:

— Կեցցե՛ Խալիան:

Համարյա բոլոր յերեսաներն արագ կերպով տեղավորվում են ձեռքից ձեռք. նրանք նստած են մեծերի ուսերին, ինչ-վոր

¹ Մունիցիպալիտետ — քաղաքային ինքնավարություն բուրժուական յերկրներում:

¹ Գարիբալդի — Խալիայի ազատագրության շարժման առաջնորդը: Ապրում եր 1807—1882 թ.

յերկար բեխերով մարդիկ սեղմել են նրանց իրենց լայն կրծքին: Աղմկի, բրբռի ու կանչի մեջ հազիվ ե լսվում յերաժշտութիւնը:

Բազմութեան մեջ վխտում են կանայք, վորոնք վերցնում են ֆնացած յեկվոր յերեխաներին ու բարձրաձայն դիմում են իրար.

— Անխտա, դուք յերկուսին եք վերցնում:

— Այո՛, Դուք է՛ր:

— Մեկն ել անվոտ Մարգարիտի համար:

Ամենուր ուրախ գրգիռ, հանդիսավոր դեմքեր, թաց, բարի աչքեր. տեղ-տեղ ել գործադուլավորների յերեխաներն արդեն հաց են ծամում:

— Մեր Ժամանակներն այս մասին չեյին մտածում, — ասում ե սև սիգարն ատամներում սեղմած մի մարդ, վոր թռչնի բիթ ունեւր:

— Մինչդեռ հասարակ բան ե...

— Այո՛, հասարակ բան ե և խելացի բան:

Ծերունին սիգարը հանեց բերնից, դիտեց նրա ծայրը ու հոգվոց հանելով թափահարեց մոխիրը: Ապա, տեսնելով մոտը կանգնած պարմացի յերկու յերեխա, վորոնք յերեկ յեղբայրներ եյին, ահեղ կերպարանք տվեց իր դեմքին, սրտմտութեամբ նայեց նրանց, — սրանք լուրջ դիտում եյին նրան, — տալա գըլխարկն աչքերին քաշեց, ձեռքերը յերկու կողմը տարածեց. յերեխաներն իրար սեղմված՝ նոթերը կիտեցին. մի փոքր հետ գնալով, ձեռուկը հանկարծ պզգեց ու բարձր, աքաղաղի շատ նման ձայնով կանչեց. Յերեխաները ծիծաղեցին ու մերկ կրունկներով սկսեցին քարերը դոփել, իսկ նա վոտքի կանգնեց, գլխարկն ուղղեց և վճռելով, վոր ինչ-վոր հարկավոր ե, նա բոլորը կատարեց, իր անհաստատ վտքերի վրա յերերուն՝ հեռացավ, գնաց:

Պարելով գալիս ե սև մագերով մի ջենովացի կին, վորը ձեռքից բռնած տանում ե յոթը տարեկանի մոտ մի մարդ փայտե վոտնամանները հազին ու մինչև ուսերը գլխարկի մեջ խրված: Նա թափահարում ե գլուխը, վորպեսզի գլխարկը դեպի ծոճրակը տանի, բայց նա անդադար դեմքի վրա յե ընկնում: Կինը փոքրիկի գլխից վերցնում ե գլխարկը և ոգի մեջ ծածանելով, մի բան ե յերգում ու ծիծաղում. յերեխան, գլուխը հետ գցած, նրան ե նայում ու ծիծաղում. հետո թռչկոտում ե, կամենալով հասնել գլխարկին, և նրանք յերկուսն ել անհետանում են:

Մի բարձրահասակ մարդ ահագին ձեռքերով, կաշվե գոգնոցը հազին, ուսին դրած տանում ե վեց տարեկան, մկան պես մոխրագուշն, մի աղջիկ. դիմելով իր կողքից դնացող կնոջը, վոր ձեռքից բռնած տանում եր կրակի պես կարմրաշեկ մի տղա, նա ասում եր.



— Հասկանում ես, յեթե այս պատվաստվի ու սովորական բան դառնա, մեզ հաղթելը դժվար կլինի, այնպես չէ:

Ու կուշտ-կուշտ, բարձր ձայնով և հաղթանակորեն ծիծաղում ե նա և, իր փոքրիկ բեռը դեպի ոգի կապուտակը վերվեր գցելով, կանչում ե.

Կեցցե՛ Պարման:

Մարդիկ հեռանում են՝ գրկած կամ ձեռքից բռնած տանելով իրենց հետ յերեխաներին: Հրապարակի վրա մնում են տրորված ծաղիկները, կոնֆետների թղթերը, ֆակինոնների¹ ուրախ խումբը: Իսկ փողոցներից, ասես վիթխարի խողովակներից, վայելչապես թափվում են ուրախ կանչերն այն մարդկանց, վորոնք ընդառաջում են նոր կյանքին:

ԻՆՅԻՉԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

I.

Մեր առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Ուլյանովը (Լենինը) ծնվել է 1870 թվի ապրիլի 10-ին (23-ին), Վոլգայի ափին գտնվող Սիմբիրսկ քաղաքում, վոր նրա պառվին այժմ Ուլյանովսկ է վերանվանված:

Վլադիմիր Իլյիչի հայրը՝ Իլյա Նիկոլայեվիչը Սիմբիրսկ նահանգի քաղաքային դպրոցների տեսուչ էր այն ժամանակ: Նա հասարակ ծագում ուներ. վաղ զրկվելով հորից, նա մեծ յեղբոր ոգնությամբ միայն, այն էլ դժվարությամբ, կարողացավ ուսում ստանալ: Սիմբիրսկում նա աշխատում էր վորքան կարելի յե շատ դպրոցներ բաց անել չքավորների համար, գյուղացի յերեխաների համար, ու այդ նպատակով, առանց իր ուժերն ու ջանքը խնայելու, շրջագայում էր նահանգում տարվա բոլոր յեղանակին:

Վլադիմիր Իլյիչի մայրը՝ Մարիա Ալեքսանդրովնան բժշկի աղջիկ էր. յերիտասարդական հասակի մեծագույն մասը նա անցկացրել է գյուղում, ու գյուղացիները շատ եյին սիրում նրան: Նա լավ յերաժշտուհի յեր, լավ գիտեր յերաժշտությունը և լեզուները՝ ֆրանսերենը, գերմաներենը և անգլիերենը. նա իր գավալներին սովորեցնում էր թե մեկը և թե մյուսը: Բազմամարդ հասարակություն և զվարճություն չէր սիրում նա. իր ամբողջ ժամանակը համարյա տանն էր անցկացնում, իր յերեխաների հետ, վորոնք նրան շատ եյին սիրում ու հարգում:

Մի շատ համերաշխ ընտանիք էր այն, վորում մեծացել էր



¹ Ֆակինո — բեռնատար (խտակերեն):

Վլադիմիր Իլյիչը: Նա յերրորդ յերեխան եր: Մանուկ հասակում նա ամենից ավելի խաղում եր Ույա քրոջ հետ, վորը տարիուկես նրանից փոքր եր: Նրանք յերկուսն ել շատ աշխույժ ու ժիր յերեխաներ եյին, սիրում եյին աղմկալից խաղեր ու վազվզոցներ: Դրանով առանձնապես աչքի յեր ընկնում Վոլոդյան, վորի հրամանատարութեան ներքո յեր գտնվում սովորաբար նրա քույրիկը: Այսպես, նա Ույային բազմոցի տակ եր քշում և ապա հրամայում եր՝ «քայլ առաջ մարշ բազմոցի տակից»: Խաղալիքներով քիչ եր խաղում, ավելի շատ կոտորում եր նրանց: Վորովհետև մենք, մեծերս, աշխատում եյինք յետ պահել նրան այդ բանից, նա յերբեմն թագնվում եր մեզանից:

Նա կարգալ սովորեց մեր մորից՝ մոտ 5 տարեկան հասակում: Յեւ Վոլոդյան և՛ Ույան, վոր նրա հետ միաժամանակ եր սովորել, շատ սիրեցին ընթերցանությունն ու հաճուքով կարդում եյին մանկական գրքեր և ժուռնալներ, վոր առատութեամբ ստանում եր մեր հայրը: Նրանք շուտով կարգալ սկսեցին պատմվածքներ ռուս պատմութեանից ու բերանացի փոտանավորներ եյին սովորում: Յերկար ընթերցումից հետո նա վագում եր քրոջ հետ խաղալու, ընդ վորում, ինչպես արդեն ասված ե, նա սիրում եր աղմկալից ու շարժունակ խաղեր: Ամառը նրանք բակ եյին վազում և պարտեզ, բարձրանում եյին ծառերի վրա, մեզ՝ յերկու մեծերիս հետ «սեւ փայտիկ» կոչված խաղն եյին խաղում (կարծեմ այս խաղը հիմա «փայտիկ թիթիկի» ե կոչվում): Վոլոդյան շատ եր սիրում այս խաղը, իսկ հետագայում — կրոկետը: Չմեռը՝ բակում շինված ձնասարի վրա սահնակ եր խաղում, իսկ ընկերների հետ — ձնագնդի: հետո արդեն սկսեց սահուկով սահել: Միաքս ե, ինչպես հանքային սահարանում, վոր սարքվում եր Միմբիրսկում, նա, ինչպես և յեղբայրը՝ Սաշան, սահուկով սահում եյին այնպիսի բարձր ձյունասարերից, վորոնց վրայից նույնիսկ սահնակով սահելն ել սարսափելի յեր — այնքան զահավեժ եր ձյունասարը: Նախ յերեքտակ կռանում եյին ձյունասարի գլխին, ապա՝ կամաց-կամաց շտկվելով՝ յերկար, շատ յերկար սահում եյին թեք սահավայրում՝ արդեն կանգնած իրենց հասակի ամբողջ յերկարութեամբ: Յես միայն նախանձով եյի նայում նրանց, սակայն հետեւել նրանց որինակին սիրտ չեյի անում: Ընդ վորում Վոլոդյային, կարծում եմ, ավելի հեշտ եր սահելը, քան թե Սաշային: Նա կարճահասակ եր, քիչ-շատ թիկնավետ և ամրակազմ: Վոլոդյան, իհարկե, սահուկներով սահում եր հետագայում, յերբ գիմնազիստ եր:

Գիմնազիա մտավ նա 9½ տարեկան հասակում, առաջին դասարանը: Նա սովորում եր շատ հեշտութեամբ ու սիրով: Հավ ընդունակութիւն ունեւ նա. բացի դրանից հայրն ել վարժեցնում եր նրան, ինչպես և նրա մեծ յեղբորն ու քրոջը, տոկունութեան ու առաջադրանքների ճիշտ և ուշադիր կատարման: Տակավին միաքս ե նրա ուսուցիչների ասածը, թե Վոլոդյային շատ ե ոգնում այն, վոր նա դասարանում միշտ ուշադրութեամբ ե լսում դասի բացատրութիւնը: Ունենալով լավ ընդունակութիւն, դասարանում նա սովորաբար միտքն եր պահում նոր դասը, ու նրան այնուհետև մնում եր այն թեթեւակի կրկնել տանը: Դրա համար ել հաճախ, յերբ մենք, մեծերս, յերեկոն սկսվելուն պես հավաքվում եյինք սեղանատուն, լամպով լուսավորվող մեծ սեղանի շուրջը՝ մեր դասերը սովորելու համար, բանից դուրս եր գալիս, վոր Վոլոդյան արդեն սովորել ե դասերը ու շաղակրատում, չարութիւն եր անում, նեղացնում եր փոքրերին ու խանգարում եր մեզ: Այն ինչ բարձր դասարաններում շատ դասեր եյին տալիս այն ժամանակները, «Վոլոդյա, հերիք ե»: «Մայրիկ, Վոլոդյան թույլ չի տալիս պարապելու»: Բայց Վոլոդյան ձանձրացել ե հանդարտութեւն ու չարութիւն ե անում, պատեպատ ե ընկնում: Յերբեմն մեր մայրը փոքրերին դահլիճ եր հավաքում, ուր նրանք մանկական յերգեր եյին յերգում նրա նվագակցութեամբ դաշնամուրի վրա: Վոլոդյան սիրում եր յերգել. նա լավ լսողութիւն ու յերաժշտական ընդունակութիւն ունեւ: Բայց նա այս բանում ել միշտ հանգիստ չեւ պահում իրեն: Փոքր յեղբայրը՝ Միտյան, 3 — 5 տարեկան հասակում, շատ նեղ սրտով տղա յեր ու առանց արտասուների յերբեք չեւ կարողանում մինչև վերջը յերգել «Ուլիկը»: Աշխատում եյինք նրան վարժեցնել այդ բանին, համոզում ելինք, բայց հենց վոր նա սրտապնդված աշխատում եր առանց աչքերը թարթելու յերգել բոլոր թախձոտ տեղերը, հանկարծ Վոլոդյան յերեսը նրան եր դարձնում և մի առանձին շեշտադրութեամբ, զեմքին սարսափելի կերպարանք տալով, յերգում եր՝ «Ուլիկին բռնեցին գորշ գայլերը»: Միտյան, ինչքան կարող եր, զսպում եր իր արտասուները: Բայց չարածձին չեւ հանդարտվում ու ավելի ևս վողբերգական ձևերով այնքան եր վախեցնում յեղբորը ու յերգում՝ «տա-տի-կին թողե-ցին յեղջու-րիկ-ներն ու տո-տիկ-ները», մինչև փոքրիկն ել չղիմանալով, սկսում եր հոնքոռ-հոնքոռ լալ: Հիշում եմ,

վոր յես այս բանի համար կռվում եյի Վոլոդյայի հետ, վրբ-
դովվում եյի, վոր նա նեղացնում ե փոքրերին:

III.

Յերբ հայրս տանն՝ եր լինում, նա մեզ՝ մեծերիս՝ ոգնու-
թյան եր գալիս, Վոլոդյային տանում եր իր կաբլինետն ու
ստուգում եր նրա դասերը: Բայց Վոլոդյան սովորաբար միշտ
խմանում եր դասերը: Այն ժամանակ հայրս սկսում եր հարց-
նել նրան հինը, լատիններն բառերն ամբողջ տետրակից: Սա-
կայն Վոլոդյան այդ ել ջրի պես պատասխանում եր: Յեվ յերբ
հայրս ժամանակ չեր ունենում մի բանով նրան զբաղեցնելու,
որինակ՝ շախմատով, այդ դեպքում սեղանատանը խաղաղու-
թյունը յերկարատեւ չեր լինում:

Լուրջ վերաբերմունք ցուցաբերելով դեպի ամեն ինչ, Վոլոդ-
յան սկսեց շախմատն ուսումնասիրել, ինչպես և մեծ յեղբայրը,
ձեռնարկների ոգնությամբ և հետազայում լավ խաղացող յե-
ղաւ: Այս խաղն եր, վոր աշխուժացնում եր նրա՝ շատ անգամ
հարկադրական կյանքը գյուղում, ծայրագավառներում, իսկ
հետո նաև աքսորավայրում ու վտարանդիության մեջ: Գիմնա-
զիստ ժամանակը նա շատ եր սիրում շախմատ խաղալ Սաշա-
յի հետ: Ու վոչ միայն շախմատ: Նա սիրում եր այն բոլոր
խաղերը, վոր Սաշան եր խաղում, անել այն բոլոր, ինչ վոր
Սաշան եր անում: Նա շատ եր սիրում իր մեծ յեղբորը
և հետևում եր նրա որինակին ամեն բանում, նույնիսկ
ամենամանր բաներում: Պատահում եր, վոր ինչի մասին ել
հարցնեյին Վոլոդյային, որինակ՝ ինչպես ե ուզում խաղալ,
կամենում ե արդյոք զբոսանքի գնալ, կամ թե ճաշի ժամանակ՝
կաթով, թե յուղով ե ուզում կաշան — նա միանգամից չեր
պատասխանի, այլ կնայեր Սաշայի վրա: Սա յեւ դիտմամբ
ուշացնում եր պատասխանը, խորամանկությամբ յեղբորը նա-
յելով: Յեւ մենք յերկուսով ծիծաղում եյինք նրա վրա: Բայց
ծաղրն ել անկարող յեղավ մոռացնել Վոլոդյային այս սովո-
րությունը, և նա պատասխանում եր՝ «ինչպես Սաշան»:

Վորովհետև Սաշան հազվագյուտորեն լրջմիտ, խոհուն և
դեպի իր պարտականությունները խիստ վերաբերմունք ունեցող
տղա յեր, Վոլոդյայի համար չափազանց ոգտավետ եր նրա
որինակին հետևելը: Նա միշտ իր առաջ տեսնում եր մի բանի
վրա կենտրոնացողի, տրված առաջադրանքը ճշտիվ և ուշադ-
րությամբ կատարողի, մեծ աշխատունակություն ունեցողի կեն-
դանի որինակը: Յեւ վոչ միայն դեպի աշխատանքն, այլև դեպի

մարդիկ ունեցած իր վերաբերմունքով Սաշան մեզ ամենիս համար
որինակ եր հանդիսանում, վայելում եր մեր ամենի բացառիկ
սերը իր զգայուն, սիրալիր և միաժամանակ ճշարտասեր ու
հաստատուն բնավորության համար: Վոլոդյան ամենուկ հասա-
կից դյուրագրգիռ եր, և Սաշայի մշտական զրապածության ու
մեծ տոկունության որինակն ահագին նշանակություն ուներ
մյուս բոլոր յերեխաների համար, վորոնց թվում նաև Վոլոդ-
յայի համար: Սկզբում իր մեծ յեղբորը հետեւելով, իսկ հետո
և գիտակցաբար, Վոլոդյան սկսեց կովել իր այս թերության
հետ, և մենք՝ նրա ավելի հասուն հասակում կամ բոլորովին,
կամ համարյա բոլորովին դյուրագրգռություն չեյինք նկատում
նրա մեջ: Այսպիսի պայքար իր դեմ և այսպիսի աշխատանք իր
վրա մենք տեսնում ենք նրանում նաև իր աշխատունակությունը
զարգացնելու գործում:

IV.

Վոլոդյայի մեջ, դեռ նրա մանուկ հասակում, յես ընդհան-
րապես նկատել եյի դեպի իր շրջապատը քննադատորեն վե-
րաբերվելու ընդունակությունը: Աշխույժ, չարաճճի և կարծես
թեթևամիտ այդ տղան, վորը հեշտությամբ նկատում եր ուրիշ-
ների ծիծաղելի ու թույլ կողմերը, վորը պատրաստ եր մի քիչ
նեղացնել, մի քիչ ծաղրել, գործնականում միայն այդ չեր, վոր
նկատում եր: Նա նկատում եր նաև լավ կողմերը ու անպատ-
ճառ այն նպատակով, վորպեսզի ստուգի իրեն, այսինքն՝ ար-
դյոք ինքն ել ալդպէս ե վարվում, արդյոք ուրիշի վարմունքի
մեջ իրեն ընդորինակելու վոչինչ չկա:

Ըստ իս, Վոլոդյայի ամենաուժեղ կողմերից մեկն այս եր:
Յես հիշում եմ մի յերկու դեպք, վորոնց առթիվ նա ասում եր...
«Յես մտածում եյի՝ այդ բանն անելու համար արիություն կու-
նենամ արդյոք: Գուցե և վոչ»:

Մանուկ հասակում պարծենկոտությունն ու մեծամտու-
թյունը նրան անձանոթ եյին, այս անդուրեկան հատկություն-
ները նա չեր հանդուրժում նաև հետագա տարիներում, հատ-
կություններ, վորոնցից զգուշացնում եր յերիտասարդությանը
կոմսոմոլի [1] համագումարում արտասանած իր ճառում:
Ծիշտ ե, մեր հայրն ել սաստիկ չեր սիրում պարծենկոտությունը
և, չնայելով մեր, մանավանդ Վոլոդյայի, մշտական գերազանց
հառաջադիմությանը դպրոցում, վոչ մեկիս չեր գովում, այլ
ուրախանալով մեր հառաջադիմության համար, ջանում եր առա-
վելագույն չափով խրախուսել մեզ:

Մանկութեան հասակում պարապելով ձկնորսութեամբ և թռչնորսութեամբ, Վոլոդյան չտարվեց վնչ մեկով և վնչ մյուսով: Գիմնազիայի բարձր դասարաններում վոչ ձկնորսութեան եր գնում նա և վոչ ել թակարդներ եր լարում թռչուններ վորսալու համար: Ու յերբ Սաշան ամառները գալիս եր համալսարանից, նրան նավակով ուղեկցողը սովորաբար միայն Վոլոդյան չեր լինում, այլ նաև փոքր յեղբայրը՝ Միտյան, վորը սաստիկ սիրում եր ուղեկցել Սաշային, յերբ նա նավակով շրջագայում եր Սվիազայի վրա՝ զանազան վորդեր ու ջրային այլ կենդանիներ վորսալու համար: Սաշան, գիմնազիստ ժամանակը, բնական գիտութեաններով եր պարապում և համալսարանի բնագիտական բաժինը մտավ. ամառները նա հետազոտութեաններով եր զբաղվում, նյութեր եր պատրաստում՝ կենդանիների այս կամ այն տեսակների մասին շարադրութեան գրելու համար:

Իսկ Վոլոդյան բնական գիտութեանները չեր սիրում: Գիմնազիայում նա հետաքրքրվում եր լատին լեզվով, գասական (կլասիկ) հեղինակներով, պատմութեամբ, աշխարհագրութեամբ, սիրում եր շարադրութեաններ գրել և շատ լավ ել գրում եր:

V.

1886 թվին, յերբ Վլադիմիր Իլյիչը մոտ 16 տարեկան յերիտասարդ եր, Ուլյանովենց յերջանիկ ընտանիքի գլխին պայթեց առաջին ծանր հարվածը — հունվարի 12-ին հանկարծամահ յեղավ մեր հայրը՝ Իլյա Նիկոլայեվիչը: Ալեքսանդր Իլյիչն այդ ժամանակ Պետերբուրգում եր: Ընտանիքի մեծ վորդին մնում եր Վոլոդյան, վորը չնայած իր յերիտասարդ հասակին, մեծ ուշադրութեան ցուցաբերեց դեպի մեր մայրը, շատ ջանք գործ դրեց ոգնելու նրան և թեթեւացնելու այն նորանոր հոգսերը, վորոնք հեղեղի նման թափվում եին նրա գլխին:

1887 թվին, յերբ Վոլոդյան գիմնազիայի վերջի դասարանումն եր, մեր ընտանիքի գլխին մի ուրիշ ծանր դժբախտութեան յեկավ: Ալեքսանդր III թագավորի դեմ կատարված մահափորձին մասնակցելու համար Պետերբուրգում ձերբակալվեց Ալեքսանդր Իլյիչը: Առաջինը Վլադիմիր Իլյիչն եր, վորին վիճակից այն ժամանակ լսել այս ծանր լուրը և նախապատրաստել յեր մորը: Ահա ինչպես տեղի ունեցավ այս: Ալեքսանդր Իլյիչի և իմ՝ նրա քրոջը, այս սողերի գրողիս, ձերբակալութեան մասին յեր ազգականուհին հաղորդեց Սիմբիրսկի, իր ծանոթ կաշկադաշտվային, խնդրելով, վոր նախապատրաստի մեր մորը: «Նամակն

ստանալով, — պատմում ե կաշկադամովան, — յես ուղարկեցի գիմնազիա Վոլոդիայի հետևից և նամակը տվի նրան կարգալու: Ուժգնորեն կիտեց նա հոնքերը, լուռ ու յերկար կենտրոնացավ նամակի վրա: Իմ առջ կանգնած եր արդեն վնչ առաջվա ուրախ, անհոգ տղան, այլ չափահաս մի մարդ: «Բայց սա հոլուրջ բան ե, Սաշայի համար կարող ե վատ վախճան ունենալ», — ասաց նա»:

Հետագայում, յերբ մեր մայրը գնաց Պետերբուրգ՝ անդրանիկ զավակների մասին միջնորդելու համար, Վլադիմիր Իլյիչը, կաշկադամովայի տսելով, քանիցս կրկնել է՝ «Նշանակում ե, Սաշան չեր կարող այլ կերպ վարվել, նա պետք ե այդպես վարվեր»: Վոլոդյան այս դժբախտութեանը տանում եր մեծ հաստատակամութեամբ, շարունակում եր պարապել նույնպիսի ուշադրութեամբ, բայց դարձավ ավելի լուրջ և ավելի լուակյաց և յերբ գալիս եր իրանից փոքր քույրերի և յեղբոր մոտ, աշխատում եր ուրախացնել նրանց. «Յե՛վ շաղակրատում եր, և՛ առաջվա նման հանաքներ եր անում, ռեբուսներ՝ եր առաջարկում նրանց, շարագներ²», — ինչպես ասում եր կաշկադամովան, վոր այցելում եր մենակ մնացած յերեխաներին:

Ալեքսանդր Իլյիչի գործն իսկապես վոր շատ լուրջ վախճան ունեցավ: Նա ճանաչվեց վորպես մահափորձի գլխավոր ղեկավարներից մեկը, մահվան դատապարտվեց ու մահապատիժն ստացավ 1887 թվի մայիսի 8-ին:

Սիմբիրսկի գիմնազիայի վարչութեանը հանդիմանութեան ստացավ, վոր լավագույն ատեստացիայով (վկայութեամբ) ու վոսկե մեդալով մի այդպիսի սարսափելի վոճրագործ ե տվել: Մտածում եյին, վոր վոսկի մեդալ չի կարելի տալ նաև նրա յեղբորը՝ Վլադիմիր Իլյիչին, սակայն նրա հառաջադիմութեանը գիմնազիական Ց-ամյա դասընթացքում անքան աչքի ընկնող հերթական 8-ամյա դասընթացքում անուշադիմութեան ժա- եր, նրա պատասխաններն ավարտական ըննութեանների ժա- մանակ անքան փայլուն եյին, վոր անկարելի յեր գրկել նրան, ինչպես և նրա քրոջը՝ Ուլյային, վոսկի մեդալից: Նա ստացավ այդ մեդալը և մտավ կազանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Տեղի ունեցան այսպես կոչված ուսանողս համար «անկարգութեաններ» կազանի համալսարանում: Վլադիմիր Իլյիչը նույնպես մասնակցութեան ունեցավ չթու- լայնություն:

¹ Ռեբուս — հանելուկ, վոր կազմված ե մի շարք նկարներ

² Շարագ — հանելուկ, վորի մեջ հանելուկային խոսքերից ու ֆիգուրներից: մասերից յուրաքանչյուրը ներկայացնում ե առանձին խոսք, վոչ պետք ե դասել առաջուց, այնուհետև կարելի յի իմանալ և ամբողջը:

ժողովում և մյուսների հետ դուրս արվեց համալսարանից և կազանից արտոլվեց Կոկուշկինո գյուղը: Այսպես համալսարանից դուրս արվելով ել վերջացան նրա աշակերտական տարիները: Բարձրագույն դպրոցի դռները փակվեցին նրա առաջ: Նորից համալսարան ընդունվելու համար նրա ու նրա մոր տված դիմումները մերժվեցին, գլխավորապես, իհարկե, նրա համար, վոր նա Ալեքսանդր Իլյիչի լեզրային եր: Այսպիսով Վլադիմիր Իլյիչի դպրոցական ուսումնառությունը վերջացավ նրա 17 տարեկան հասակում: Բայց նա այնքան գիտակից եր, վոր կարողացավ ինքն իրեն, առանց կողմնակի ոգնություն, ամբողջացնել իր կրթությունը:

Իր կյանքի այդ տարիների ընթացքում, նախ՝ Կազանում, ապա Սամարայում — ծայրագավառային այդ վայրերում — նա ամբողջացրեց նաև իր՝ հեղափոխականի՝ կրթությունը: Նա ուսումնասիրեց Մարքսի բոլոր շարադրությունները և վերջնականապես գտավ իր ուղին, վոր բանվոր դասակարգի պայքարի իդեան եր:

Նա սկսեց ուսումնասիրել ռուս իրականությունը՝ պարզելու համար, թե վորքան գործադրելի յե Մարքսի ուղին այդ իրականություն մեջ: Յեվ միանգամայն անխախտորեն պարզելով այդ, նա հաստատուն քայլով գնաց այդ ուղիով և, իր ստեղծած կոմունիստական կուսակցությունը գլխավորելով՝ հետևից տարավ Ռուսաստանի բանվոր դասակարգին մինչև վերջնական հաղթանակը:

ՄԵԾ ՊԼԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ¹

1. ՀՆԳՍՄՅԱԿԻ ՀԵՏԱԽՈՒՅՂՆԵՐԸ

Շատ հեշտ ե ասել՝ կառուցել հարյուրավոր նոր քաղաքներ, հազարավոր նոր գործարաններ: Իսկ ինչից կառուցել նրանց: Իհարկե վոչ ոգից: Հարկավոր են աղյուսներ, ցեմենտ, ապակի և այլ նյութեր:

Արդյոք կբավականացնի՞ շինարարության համար աղյուսը, ցեմենտը, ապակին, թե վոչ: Արդյոք կբավարարի՞ մեքենաներ շինելու համար յերկաթը, թե վոչ:

Պատրաստի մատերիալներ մենք շատ չունենք, բայց հուսույթ՝ ինչքան ուզես՝ կա:

Յեթե վագոնի պատուհանից ձեր աչքին յերևում են լոկ անտառներ, ամալի տարածություններ ու ճահիճներ, նշանակում ե դուք վոչինչ չեք տեսնում: Ամալի տարածությունները պարունակում են իրենց մեջ կավ, ավաղ, քար, անտառները՝ զանազան տեսակ հեծաններ, ծպեղներ, կանգնակներ, շալաներ:

Տորֆի ճահիճները միզ ելեկտրական հոսանք են տալիս:

Կավից և ավաղից կպատրաստենք աղյուսներ, կավից և կրից՝ ցեմենտ, յերկաթահանքից՝ յերկաթ:

Հումուլթ մենք կարող ենք ճարել: Հենց առաջին խնդիրը, վորից պետք ե սկսել, այդ հետախուզությունն ե:

Մարտը սկսելուց առաջ պետք ե հետախուզություններ անել և հետախուզությունն ընթանում ե:

Մենք ամեն տարի ուղարկում ենք գիտական եկսպեդիցիաներ ամենահեռավոր յերկրամասերը՝ դեպի բևեռները, Ղազախստանի անապատները, Ալտայի ու Պամիրի լեռները:

Մի ջոկատ ճանապարհ ե բաց անում իր համար դեպի Սիբիրի ճահճոտ տունդրանների այս կամ այն վայրը:

Գնում ե առանց քարտեզի, համարյա փակ աչքերով: Գնում են մարդիկ ցանցավոր սև դիմակներ հագած: Ուրիշ կերպ չես ազատվիլ մոծակների ու մժողուկների ձեռքից: Գնում ե ջոկատը, իսկ նրա հետ միասին վոչ մի քայլ հետ չմնալով առաջ ե շարժվում մոծակային շարժուն եկսպեդիցիան:

Տունդրան այնպես հարթ ե, կարծես ավսե լինի, վոչ մի բլրակ, վոչ մի ծառ չկա այնտեղ:

Իսկ միևնույն ժամանակ հեռու հարավում հետախույզների մի ուրիշ ջոկատ ե շարժվում: Գնում են լեռնային արահետով, կարծես հսկայական պատի կարնիզ լինի այդ արահետը. վոտների տակ հարյուր մետր խորություն մեծացված: Վախեցար թե չե, թավալվող կընկնես ու այնուհետև վոսկորներդ ել չեն գտնի:

Բայց հետախույզը չպետք ե իմանա ինչ ասել ե վախը:

Յեվ գնում են մարդիկ՝ ամբողջ մարմնով կպչելով քարե պատին, զգուշությամբ շոշափելով ժայռի դուրս ցցված մասերը:

Տասը տարվա ընթացքում՝ 1919 թվից սկսած գիտությունների Ակադեմիան ուղարկել ե յերեք հարյուր յոթանասուն մեկ եկսպեդիցիա:

Այդ դեռ միայն գիտությունների Ակադեմիան: Իսկ վորքան հետախույզներ են ուղարկել մեր մյուս գիտական հաստատությունները. ինչքան մարդիկ են աշխատում հիմա հետազոտման

¹ Մեծ պլանի պատմությունը գրված ե 1930 թվին:

վայրերում, այնտեղ, ուր վորոշված է անցկացնել յերկաթուղիներ, փորել ջրանցքներ, բացել քարածխահանքեր, կառուցել գործարաններ: Ամեն տեղ մեր յերկրում աշխատում են հետախույզներ:

II. Ի՞նչ են ասում նրանք, Հաջողվե՞լ է արդյոք նրանց մի փորեն բան գտնել:

Նրանք ասում են, վոր մենք դեռ բոլորովին չենք ճանաչում մեր յերկիրը:

Նրանք ասում են, վոր մեր յերկիրը դեռ չի հայտնաբերված:

Կարելիացում, բեռնային շրջանից այն կողմը, տունդրաների մեջ նրանք գտել են խրբինական հսկայական լեռները:

Յեվ գիտե՞ք ինչից են գոյացած այդ լեռները: Գոյացած են ամենաարժեքավոր հումուլթից — նեֆելինից և ապատիտից¹: Նեֆելինը կտա մեզ ապակի և ալյումին: Ապատիտը — ֆոսֆորաթթվային կիր², վորը ծառայում է մեր դաշտերի համար իբրև սլարաբա նյութ: Յեվ այդ հումուլթը տասնյակ հարյուրավոր միլիոն տոններով է գտնվում այնտեղ:


Կարա-Կում անապատում նրանք հանգիպեցին շատ տարրինակ բլրակներին:

Կարծես թե հսկաներն իրենց զվարճության համար ավազից աղյուսներ են շինել: Մի փոքր փորվրելուց հետո այդ բլրակները, յերևաց, վոր այդ վոշ թե ավազ է, այլ ավազի ու ծծումբի խառնուրդ է: Իսկ ծծումբ մենք գնում ենք Իտալիայում, բերում ենք շատ հեռվից և վճարում մեծ գումարներ:

Ծծումբը մեզ անհրաժեշտ է նաև թղթի ու ռետինի մշակման համար: Նրանով սրսկում են խաղողը և բամբակը, վոր ազատեն նրանց վնասատուներից:

Յեվ հանկարծ պարզվում է, վոր մեզ մոտ վորքան ասես ծծումբ կա:

Միբիրում հետախույզները գտել են ինքնածին սողային լճեր: Իսկ դուք գիտե՞ք ինչ բան է սողան: Այդ այն նյութն է, առանց վորի չի կարելի ոճառ յեփել ու վոշ միայն ոճառ, այլ և ուրիշ շատ բաներ:



ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ
ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԾԷ
ՍՈՅԱԼԻՍՏԱԿԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՀԻՄՔՆ ԱՎԱՐՏՎԱԾԷ

¹ Ապատիտ — խարուսիկ քար:

² Суперфосфат:

Սողան պատրաստում են աղից, վորի համար կառուցում են մեծ-մեծ գործարաններ: Այն ինչ աղը պատրաստի վիճակում գտնվում է լճերում, հավաքիր և մշակիր ինչքան կուզես:

Յակուտիայում հետախույզները յերևան են բերել վեց հարկանի տնից ել բարձր մաքուր աղաքարի ժայռեր: Բայց աղ մենք ունենք նաև ուրիշ վայրերում: Յակուտիայում հետախույզները գտել են ավելի զարմանալի բան՝ գիպսի թափանցիկ խոշոր բյուրեղներ՝ յերեսուն հինգ անգամ յերեսուն հինգ սանտիմետր: Իսկ և իսկ լուսամուտի ապակի, միայն վոչ ապակուց: Ուղղակի վերցրու և դիր լուսամուտին: Հապա Ղազախստանի խոնդրիլան: Խոնդրիլան մի տեսակ բույս է: Խոնդրիլայի ցողունների վրա գիտնականները նկատել են ինչ վոր կոշտուկներ: Հետազոտելուց հետո պարզվեց, վոր դա կաուչուկ է, այնինչ մենք՝ մինչև հիմա մեր ռետինի գործարանների համար կաուչուկը արտասահմանից եյինք ներմուծում:

Մի խոսքով չի կարելի թվել այն բոլորը, ինչ գտել են հետախույզները:

Բայց հետախույզները միայն անտառներում, ամայի տափաստաններում և անապատներում չեն աշխատում: Յուրաքանչյուր լաբորատորիայում աշխատում են հետախույզներ: Նրանք ասում են՝ հարկ չկա, վոր բոլորս ել հազարավոր կիլոմետր ճանապահ գնանք, թրջվենք անձրևի տակ, ատամներս կրճատացնենք դաժան ցրտից: Ահա մենք հենց այստեղ, այս սեղանի մոտ, այս ապակյա անոթների մեջ կգտնենք մեր գործարանների համար արժեքավոր հումուլթներ: Մենք կսովորեցնենք, վոր գործարանները դենը նետած թափթփուկներից ստանան հումուլթ, այնպիսի բաներից, վորը վոչ վոքի պետք չեն, վորը թափթփված են գետնին և կան ամեն տեղ: Յեվ ահա գտնված է յեղեգնից թուղթ ու սովարաթուղթ (կարտոն) պատրաստելու, հասարակ և կոպիտ բրդից նուրբ մահուր, շաքարի գործարանների թափթփվածքից շաքար ստանալու յեղանակը:

Հումուլթը մեզ կբավարարե: Այդ մասին չպետք է անհանգստանալ: Թվում է միայն, թե մեր յերկիրն աղքատ է ու ամայի:

Տորֆային ճահիճներում մենք կկառուցենք ելեկտրակայաններ և այնտեղից հաղորդիչ լարերի միջոցով կուղարկենք ելեկտրական հոսանք:

Յեղևուց մենք կստանանք թուղթ: Փետրախոտով ու փեխինով (յեղևիններով) ծածկված տափաստանները կհերկենք ու կցանենք և նրանք մեզ հաց կտան:

Իսկ հողի տակ — այնտեղ մենք ունենք ածուխ, յերկաթ, ցինկ, պղինձ: Չե՞ վոր մենք նոր ենք միայն սկսել այդ բոլորը հայտաբերել: Հինգ տարի առաջ մենք կարծում եյինք, թե Սիբիրում և Կուզնեցկի ավազանում կա միայն 250 միլիարդ տոնն ածուխ: Իսկ հիմա հետախույզներն այնտեղ յերևան են բերել նորից 150 միլիարդ տոնն ածուխ:

Ահա մի հրաշալի գյուտ: Չե՞ վոր այդ հինգ կիլոմետր բարձրություն ունեցող մի ածխալեռ է: Ի՞նչպես է յեղել, վոր այդպիսի յեռն աննկատելի յե մնացել: Աննկատելի յե մնացել, վորովհետև ածուխը հողի յերեսին պառկած չէ, կույտերով դիգված չէ: Նա պառկած է շերտերով գետնի խորքերում: Չե՞ վոր դրսից չի յերևում՝ գետնի տակ ածուխ կա՞ թե վոչ: Նրան հասնելու համար հարկավոր է գետինը հորատել, ծակել — անցք բացել: Իսկ այդ այնքան ել հասարակ բան չէ:

Հեշտ է հորատել փխրուն շերտերը: Իսկ յեթե այնտեղ պատահի կարծր քար: Պատահում է, վոր վոչ մի պողպատ չի ծակում, ստիպված ես հորատել — փորել աղամանդյա փորիչով:

Հո՞ միայն Կուզնեցկի ավազանը չէ: Այստեղ մենք դեռ նոր ենք սկսել հանքեր կառուցել: Իսկ Դոնբասում արդեն կես դար է, ինչ աշխատանք է տարվում: Յեվ ինչ, արդյո՞ք մենք գիտենք է, յոնբասը: Վոչ, չգիտենք: Մենք ստիպված ենք նոր հանքեր փորել փակ աչքերով — գուշակելով, առանց հետազոտելու թե ի՞նչ շերտ է նա, հեռու յե ընկած, ամեն տեղ հարկ յեղած հաստությունն ունի՞ թե վոչ:

Իսկ յերկաթը:

Մի՞թե մենք գիտեյինք, վոր ներքին Պավլոփայում յերկաթ է գտնվում: Իսկ հիմա մենք սկսել ենք այնտեղ Սապերսկի մետաղաձուլական մեծ գործարանի կառուցումը: Այդ գործարանը մեզ տարեկան 650 տոնն թուջ¹ կտա:

Նմանապես և նավթը:

Շատ ժամանակ չէ, վոր պրոֆեսոր Պրեոբրաժենսկին նավթ է գտել այնտեղ, վորտեղ մարդիկ չեն ել մտածել վորոնե — Պերմից ընդամենը 40 կիլոմետր հեռավորության վրա: Գիտնականներն ել են ասում, վոր մեզ մոտ Միջին Վոլգայից սկսած մինչև Ուրալը պետք է նավթ լինի:

¹ Хор-дринла — կռկաստինձ:

¹ Զուգուս:

Մի խոսքով, հարկավոր ե ամեն տեղ հողաշերտը հետա-
խուզվի, «գնդասեղով» հորատվի: Յեւ հետախուզությունը տար-
վում ե: Շատ տեղեր կանգնած են արդեն պողպատյա յերկար-
վոտանի հսկաները: Դրանք «ցցահարներն» են—հորատման հաս-
տոցների աշտարակները: Պողպատյա և ագամանդյա դայլի-
կոնները ծակում են հողաշերտը, փորում քարը, համնում են
տանայակ ու հարյուրավոր մետր անպետք, «դատարկ» շերտերի
տակ թագնված հարստությանը:

III. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՊՐՈՅԱԿԱՆ ՊԵՏՔ Ե ՀԵՏԱԽՈՒՅՉ ԼԻՆԻ

Յուրաքանչյուր դպրոցական յերազում ե հեռավոր յերկրներ՝
Աֆրիկա, Ամերիկա, Հնդկաստան ճանապարհորդելու մասին:

Բայց ինչո՞ւ այդքան հեռուն դնար Գիտե՞ք արդյոք այն
տեղը, ուր դուք եք ապրում: Կարո՞ղ եք ասել, կա՞ն արդյոք
ձեր ապրած տեղերում տորֆի ճահիճներ, անտառներ, կրաքար,
աղյուսի և խեցու կավ, կառուցումների ավագ:

Իհարկե, դուք այդ չգիտեք:

Առաջին ճանապարհորդությունը, վոր դուք պիտի կատա-
րեք՝ պետք ե լինի ձեր քաղաքի կամ գյուղի շրջակայքում:

Կազմակերպեցեք եկսկուրսիաներ, կազմեցեք մանրամասն
քարտեզներ: Այդ քարտեզների վրա նշանակեցեք այն բոլորը,
ինչ վոր ոգտակար կարող ե լինել հնգամյակի համար: Խնդրե-
ցեք ձեր ավագ ընկերներին, ձեր ուսուցիչներին, վոր նրանք
ոգնեն ձեզ, սովորեցեք նրանցից վորոշել հանքային նյութերը:
Ձե՞ վոր դուք դեռ չգիտեք նայելու ձեր: Դժվար թե դուք կա-
րողանաք տարբերել հանքի կտորը հասարակ քարից: Իսկ հե-
տախույզը պետք այդ իմանա: Միայն գրքերը դրա համար քիչ
են: Հարկավոր ե, վոր յուրաքանչյուրն ինքը տեսնի, շոշափի:

Հիշեցեք, վոր այն յերկիրը, ուր դուք եք ապրում, դեռ
ուսումնասիրված չե:

Ուսումնասիրեցե՛ք նրան:

ՅԵՐԳ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Քարը քարի

Դարը դարի,

Ո՛ւր ենք հասել հիմա մենք,

Մեծ պայքարի

Վոգով արի՝

Դարն ենք կերտում հիմա մենք:

Յեղի՛ր անահ,

Ո՞րոցի՛ր մահ

Կառուցման մեծ ճակատում:

Լսի՛ր, տհա

Ճա՛րքիդ վրա

Նոր արե՛վներ են ժպտում:

Քարը քարի,

Կամքով արի

Կառուցում ենք կյանքը մեր,

Նոր աշխարհի

Լույսը վառի,

Ի՛մ բարեկամ, ի՛մ ընկեր:

Յեղի՛ր տոկուն,

Թող քո հոգում

Հույսը յերբեք չմարի,

Ձեռքիդ դրած

Քո մի քարը

Հավասար ե մի դարի:

ՀՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄՈՒԺԻԿՆ ՈՒ ԱՂԱՆ

(Հեֆիաթ)

Լինում ե, չի լինում, մի աղա յե լինում, վորն ապրում եր իր հա-
ջուստ կալվածքում: Մեկ անգամ գործով մի մուժիկ ե գալիս նրա մոտ:
Հենց նոր եր մուժիկը մոտենում տանը, յերբ տան մոտից նրա վրա
հարձակվեց աղայի սիրելի շունը: Մուժիկը սաստիկ վախեցավ: Նա
ձեռքում փայտ ունեւր: Հենց վոր շունը վրան հարձակվեց, նա ձեռա-
փայտը հասցրեց շան գլխին ու սպանեց նրան: Աղան իմացավ շան
սպանության մասին, և մուժիկը խոստովանեց իր արածը և թողու-
թյուն խնդրեց: Աղան սաստիկ ափսոսում եր շանը: Այդ շունը
շատ լավ եր պահպանում նրա կալվածքը: Աղան չնեւրեց մուժիկին և
դատի տվեց նրան:

Հետո նրանց կանչեցին դատարան: Դատավորները հարգում եյին
աղային և ուզում եյին աղայի կամքովը դատել մուժիկին: Դատավոր-
ներն ասում են.

— Աղա, ինչպե՞ս կուզեյիք սրան պատժել:

Աղան պատասխանում ե.

— Ահա թե ինչպես: Վերովհետեւ իմ շունը լավ շուն եր և շատ
թանգ արժեք ինձ համար, նա պահպանում եր իմ ամբողջ կալվածքը և
փրկում ինձ փորձանքից, ապա յես ուզում եմ, վոր մուժիկը լինի իմ
շան տեղը, ապրի բակում, ինչպես շունն եր ապրում, և չհամարձակվի
խոսել մարդու ձայնով, այլ միշտ հաջի շան պես, պահպանի իմ կալ-
վածքը և փրկի ինձ փորձանքից: Իսկ յիս ել դրա համար նրան ավելի
տաք կհագցնեմ և կհրամայեմ լավ կերակրել նրան, ինչպես հրամայում
եյի լավ կերակրել իմ սիրելի շանը: Իսկ նա յեւ, վորպեսզի գիշերները
չքնի, ամբողջ գիշերը հաջի և պահպանի իմ կալվածքը:

Դատավորները համաձայն եյին, իսկ մուժիկը չեւր ել համարձակ-
վում հակաճառել:

Վորոշումը կայացավ: Մուժիկն ապրում էր աղայի բակում և հաջում էր շան պես: Նա լավ էր հաջում, գիշերները չէր քնում, վաղում էր բակում և հաճախ աղայի լուսամուտի տակ ավելի ուժեղ էր հաջում: Աղան գոհ էր «շնից»: Նա հրամայում էր.

— Լավ կերակրեք շանը:

Մուժիկն ավելի քան կես տարի շարունակ հաջեց, ծանոթացավ գողերի հետ և նրանց սովորեցրեց.

— Մուժ գիշերով յեկեք և տարեք աղայի հարստութունը: Յես կբանամ այնտեղ դուռը, իսկ դուք չվախենաք, չնայած, վոր ուժեղ եմ

հաջելու: Միայն շուտ արեք տարեք և ուրախ հե-

ռացեք, իսկ հետո ինձ ել չմոռանաք:

Գողերն այդպես ել արին: Իսկ «շունն» այդ գիշեր ավելի ևս ուժեղ էր հաջում, վաղում էր բակում, մինչև անգամ չէր թողնում, վոր աղան քնի: Աղան մտածում էր՝ «Լավ ե հաջում շունը: Պետք ե հրամայել ավելի լավ կերակրել նրան»:

Իսկ առավոտը, յերբ ծառաները վեր կացան և տեսան, վոր մառանը կողոպտված ե, հայտնեցին աղային: Նա սաստիկ բարկացավ «շան» վրա, վոր լավ չի պաշտպանել իր գույքը և դատի տվեց «շանը»:

Աղային և «շանը» կանչեցին դատարան: Աղան ասաց.

— «Շունը» գողեր ե բաց թողել բակս:

Դատավորները հարցնում են աղային.

— Իսկ ասացեք, աղա, գիշերը նա հաջում էր:

Աղան պատասխանեց.

— Շատ ուժեղ էր հաջում, մինչև անգամ չէր թողնում, վոր քնեմ: Յես մտածում եյի հրա-

մայել, վոր ել ավելի լավ կերակրեն նրան:

Դատավորներն ասացին:

— Տեսնում եք, աղա, այդ գիշեր «շունը» ուժեղ հաջում էր, դուք ել պետք ե ծառաներից մեկին ուղարկելիք բակը և իմանայիք, թե ինչ ե յեղեր, վոր նա այդպես ուժեղ հաջում ե, չե՞ վոր նրան արգելված ե խոսել:

Դատավորներն ասացին:

— Մենք համարում ենք, վոր «շունը» մեղավոր չե:

Աղան շատ էր բարկացել մուժիկի վրա: Իսկ առաջվա իրավունքներով աղան կարող էր բանտ նստեցնել գյուղացուն առանց դատի: Յեվ աղան վորոշեց.

— Ինքս կտանեմ նրան բանտը և իմ ձեռքով բանտարկել կտամ: Աղան վորոշումը կատարեց և տարավ մուժիկին, իսկ մինչև բանտը մոտ 50 վերստ եր: Արդեն մուժն ընկել էր, և նրանք սպիպված եյին գնալ մուժ անտառով: Աղան ինքն էր քշում ձին: Մուժիկի աչքով ընկավ արմատահան յիղած մեծ արմատներով մի յեղենի: Արմատները վեր եյին ցցված: Նկատելով այդ ծառը, նա իսկույն բռնեց ձիու սանձը և դուռաց.

— Տպռո՛ւ, տպռո՛ւ, տպռո՛ւ:

Աղան սաստիկ վախեցավ.

— Ի՞նչ պատահեց:

Մուժիկը վախեցած ձայնով պատասխանեց.

— Քեղ մատաղ, աղա ջան, մեկ տես՝ արջը կանգնած ե հետևի թաթերի վրա:

Աղան ել տեսավ այդ սաստիկ վախեցավ և շտապեց.

— Շուտ արա, շուտ հետ դառնանք: Իսկ մուժիկն ասաց.

— Զի կարելի՛, աղա, արջը կտեսնի, վոր մենք վախենում ենք, կհարձակվի և կպատառոտե մեզ:

Աղան ասաց.

— Ապա ի՞նչ անենք, ի՞նչ:

Մուժիկը պատասխանեց.

— Աղա, նա շատ վախենում ե շան հաջոցից:

Աղան գոռաց.

— Դե շուտ արա, հաջիր:

Մուժիկն ասաց.

— Յես արդեն հաջել չեմ կարող, ձայն ել չուենմ: — Իսկ ինքը վախեցնում ե աղային.

— Աղա, աղա, արջը մոտենում ե մեզ:

Աղան տեսնելով, վոր բանը բուրդ ե, ինքն սկսեց շան պես հաջել: Մուժիկն ասաց.

— Աղա, պետք ե ուժեղ հաջել:

Աղան ավելի ուժեղ հաջեց:

Մուժիկն ասաց.

— Արջը վախենում ե, հետ ե գնում:

Աղան հոգնեց հաջելուց և ասաց,



— Այժմ ել դո՛ւ հաջիւր:

Մուժիկն սկսեց հաջել:

— Համ, համ:

Մուժիկի հաջոցը լավ չի դուրս գալիս և ասում ե.

— Աղա, աղա, արջն ավելի մոտեցավ:

Այդպես ել աղան ամբողջ գիշերը հաջեց և իր ամբողջ ձայնը կորցրեց և ել չկարողացավ հաջել:

Սկսեց լուսանալ: Մուժիկն ասում ե.

— Աղա, այդ արջ չեր:

— Ապա ի՞նչ եր:

— Բանից դուրս ե գալիս արմատահան յեղած յեղևնի յե: Նրա արմատներն են վեր ցցված: Յես թողեն գիտեյի, վոր արջ չե:

— Այ դու անախտան, յես քեզ ավելի յերկար կպահեմ բանտում:

— Իսկ յես կարող եյի քեզնից ել լավ հաջել, միայն չեյի ուզում: Յես ուզում եյի, վոր ամբողջ գիշերը դու հաջես: Հիմա յես ամենքին կպատմեմ, վոր աղան ամբողջ գիշերը հաջում եր շան պես, վոր յես ստիպեցի նրան հաջել:

Աղան ավելի խիստ բարկացավ մուժիկի վրա: Աղան չեր ուզում, վոր այդ մասին ամենքն իմանան: Ինչքան ել աղան չեր վախեցնում մուժիկին, նա դարձյալ ասում եր.

— Ինչ ուզում ես արա, աղա, միևնույն ե, պատմելու յեմ:

Աղան տեսնում ե, վոր գործը վատ ե, ասում ե մուժիկին.

— Ի՞նչ տամ քեզ, վոր ուրիշներին չպատմես:

Իսկ մուժիկն ասում ե.

— Ներիր ինձ և բանտ մի՛ նստացնի, բացի այդ, մի լավ կով նվիրիր ինձ և յերկու պարկ ցորեն և թող վոր ապրեմ տանս: Իսկ քեզ, աղա, շնորհակալ կլինեմ և կգովեմ ու ամենքին կասեմ՝ «Վո՛չ, աղան շան պես չեր հաջում»:

Ի. Ա. Կ Ր Ի Լ Ո Վ (1768 — 1844)

Իվան Անդրեևիչ Կրիլովը ծնվել ե մի ազնվական ընտանիքում, վոր հարուստներից չեր: Կրիլովները սեփական կալվածներ չեն ունեցել: Նրա հայրը, սպայի պաշտոնը թողնելով, փոքր աստիճանավորի ծառայութիւն ստանձնեց: Հոր մահից հետո, ընտանիքն ընկավ սաստիկ չքավորութեան մեջ: Ապագա առակագիրը համարյա 10 տարեկան հասակից ստիպված յեղավ թղթեր արտագրելով փող աշխատել: 15 տարեկան հասկում նա արդեն ծառայում եր Պետերբուրգում: Կրիլովը յերեք դպրոցական ուսում չի ստացել: Կրիլովը 15 տարեկան եր, յերբ քթեց իր առաջին կատակերգութիւնը (կոմեդիա):

Իր վաղ գրվածներում նա ծաղրում եր ազնվական հասարակութիւնը:

Ինչպես և շատերն այն ժամանակվա գրողներից, Կրիլովն ել յենթարկվեց վտանգի կատակութեան խճճանքներին: Դրա համար ել նա միառժամանակ դադարեց գրական աշխատանքով պարապել:

1806 թվից ե, վոր Կրիլովը հայտնի յե դառնում վորպես առակագիր: Իր առակներում նա պատկերում եր մարդկային թերութիւններն ու արատները: Նրա առակներում գործող անձերը մեծ մասամբ կենդանիներն են, ինչպես՝ գայլերը, աղվեսները, շները և այլն:

Կրիլովը 200-ից ավելի առակ ե գրել: Նրանց մեծ մասը հայտնի յե ամբողջ աշխարհին:



ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Բախտի բերմամբ,

Թե պատահմամբ,

Մի մեծ ազուով

Մի գունդ պանիր

Դաշտում գտավ,
Կտուցն առավ,
Ծառին թռավ:
Ո՛ր, ինչ պանիր, դեղին վոսկի...
Բայց թե հառած համը իսկի,
Աղվեսն անցավ ծառի մոտով,

Գերվեց,

Երվեց

Պանրի հոտով:

Վաղեց գնաց բերնի ջուրը
Յնվ թուլացան կուռն ու ճուռը:
Են ժամանակ իրա ձեռքին,
Ծառի տակից, աչքն ագռավին,
Հեղիկ-նաղիկ,
Փափկամաղիկ,

Բացեց լեզուն անուշ, մեղուշ,
Թափեց, հափեց շաքար ու նուշ.

«Ի՛նչքան լավն էս,

Յեա քո գերին,

Քո եղ սեվիկ

Վառ աչքերին,

Նուրբ ծալքերով

Ջուլզ թևերին:

Մի դու մտիկ,

Այդպես քթիկ,

Այդպես ճտիկ.

Մախմուր ագին,

Խաս ու դումաշ

Ատլասն հագին:



Գիտեմ, անշուշտ իմ քուրիկի
Ձայնն ել կըլի հրեշտակի:
Յերգի, քուրիկ, մի ամաչի,
Իմ ուզածը մի մեծ բան չի:
Թե վոր չքնաղ եղ տեսքի հետ
Յերգելում ել յեղար վարպետ,
Ո՛ր, կղառնաս իմ սրբունի,
Թռչունների մայր թագունի:
Ագռավ աղին իրեն տված
Գովեստներից շշմած, ուռած՝
Ագռավային
Բկովը մին,
Վոր չը կըռռաց,
Պանիրն ընկավ ծառիցը ցած,
Շողոքորթը ըռխեց, գնաց:

Ա. Ս. Պ Ո Ի Շ Կ Ի Ն

(1799 — 1837)

Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը անցյալ դարի հանճարեղ ռուս բանաստեղծն է։ Նրա գրվածքներն որինակ եյին հանդիսանում այն ժամանակվա լավագույն գրողների համար։ Մեր ժամանակակից գրողներն ել դեռ սովորում են Պուշկինից։

Նա աղնվական եր ու կալվածատեր, ունեւ ճորտեր, կալվածներէ տեր եր։ Նա իր աղնվական միջավայրի ամենակրթված և առաջավոր մարդ-

կանց շարքին եր պատկանում։

Իր մի քանի գրվածքներում նա խոսում եր ցարական իշխանության դեմ. այդ գրվածքներում նա նշում եր ճորտատիրական այն ճնշումը, վորին յենթարկված եյին գյուղացիները։

Նրա համարձակ կարծիքների համար, վորոնք արտահայտվում եյին նրա բանաստեղծություններում, ցարն աքսորեց նրան Պետերբուրգից։ Պուշկինը մի քանի տարի ապրեց աքսորում։ Ստորև առաջ բերված «Գալանավոր» բանաստեղծությունը նա գրել ե աքսորավայրում։



Պուշկինը հետաքրքրվում եր հեքիաթներով, լսում եր իր դայակի՝ Արենա Ռոդիոնովնայի պատմած հեքիաթները և գեղարվեստորեն մշակում եր նրանք։

Մինչև իր կյանքի վերջը՝ Պուշկինը վոստիկանության հսկողության տակ եր գտնվում։

Պուշկինն ապրեց ընդամենը 38 տարի։ 1837 թվին նա սպանվեց մենամարտում, ուղարկված մի անվանի սպայի՝ Դանտեսի ձեռքով։

ԿԱԼԱՆԱՎՈՐ

Խոնավ բանտում պատուհանիս մոտ նստած,
Յես նայում եմ ինչպես տխուր ու դարդոտ
Արծիվ-լնկերս ազատ ոդում մեծացած՝
Աչքիս առաջ վորս ե կտցում արյունոտ։

Յեւ կտցածը դեն գցելով՝ վշտահար
Նայում ե ինձ, ասես միտքս գուշակած,
Աչքով անում, բարձր կանչում անդադար.
«Թռչենք, ընկեր, թող այդ բանտդ անիծած»։

«Մենք բնության ազատ վորդիք՝ համարձակ
Թռչենք այնտեղ, ուր կան ամպեր ու լեռներ,
Ուր փայլում են ծովի ջրեր կապուտակ,
Ուր քամին ե միայն մեզ հետ — մեզ ընկեր...»։

ԱԶԴԱՆՇԱՆ

I.

Ի վանդ Սեմյոնը ծառայում էր յերկաթուղու վրա, պահապանի պաշտոնով: Նրա բուդկայից մինչև մեկ կայարանը՝ տասերկու վերստ էր, իսկ մինչև մյուս կայարանը՝ տաս վերստ: Այստեղից մի չորս վերստ հեռավորության վրա անցյալ տարի բաց արին մի մեծ մանարան¹: Անտառի յետևից սեվին էր տալիս նրա բարձր ծխնելույղը, բացի հարևան բուդկաներից, մոտակայքում ուրիշ վոչ մի բնակչություն չկար:

Ամառ էր: Աշխատանքը ծանր չեր, ձյուն մաքրելու, դեռ ամելու հարկ չկար: Ասենք՝ գնացքներն ել այդ ճանապարհի վրա շատ չեն: Սեմյոնը, որը յերկու անգամ շրջագայում էր իր մեկ վերստը, տեղ տեղ փորձում էր պտուտակամայրը (գայկան), պնդացնում այն, հավասարեցնում էր խճաքարը, աչքի յեր անցկացնում ջրի խողովակները, ապա գնում էր տուն՝ հոգալու իր տնտեսությունը: Նրա տնտեսական գործերն ել միշտ հանդիպում էին միևնույն արգելքին: Ի՛նչ վոր ուղեր անելու, ամենի մասին պետք է հարցնեք ճանապարհի վարպետին, սա յեւ իր կողմից պետք է ղեկուցեր ուղեմասի պետին. մինչև խնդիրը տեղ հասներ և պատասխանն ստացվեր, ժամանակն ել արդեն անցած կլիներ, կուշանար: Բանն այնտեղ հասավ, վոր Սեմյոնն ու իր կիներ պարապված լինեցին նույնիսկ ճանձրանալ:

Անցավ մոտ յերկու ամիս: Սեմյոնն սկսեց ծանոթանալ իր հարևան պահապանների հետ: Նրանցից մեկը մի շատ ծեր մարդ էր, վորին միշտ ել ուզում էին պաշտոնից հանել: Բուդկայից նա դժվարությամբ էր դուրս գալիս. նրա փոխարեն կիներն էր շրջում: Մյուս պահապանը, վոր ավելի մոտ էր կայարանին, մի յերիտասարդ մարդ էր, նիհար ու ջլոտ կազմվածքով: Սա առաջին անգամ Սեմյոնին հանդիպեց շրջագայելու մեջ տեղում: Սեմյոնը գլխարկը հանեց ու բարևեց:

— Հարևան, — ասում է նա, — բարե՛վ քեզ:

Հարևանն աչքի ծայրով նայեց նրան:

— Բարե՛վ, — ասում է:

Յերեսը շուռ տվեց ու հեռացավ: Սրանից հետո իրար հանդիպեցին նրանց կնանիք: Սեմյոնի կինն՝ Արինան բարևեց հարևանուհուն. սա յեւ նույնպես յերկար չխոսեց ու հեռացավ: Մի անգամ Սեմյոնը հանգիպում է այս կնոջը:

— Ա՛ղջի, ես ի՛նչ բան եմ, ինչո՞ւ մարդդ եղպես չխոսկանի մեկն եմ: Կինը մի քիչ լուռ մնաց և հետո ասաց.

— Դեհ, ինչի՞ մասին պիտի խոսի՝ նա քեզ հետ. ամեն մարդ իր դարդն ունի:

Բայց անցավ մի ամիս ևս, ու նրանք ծանոթացան: Ուղեմասի վրա իրար հանդիպելիս՝ Սեմյոնն ու Վասիլին նստում էին ճանապարհի յեզրին, ծխալուտ էին ծխում և զրույց անում իրենց ապրուստի, կյանքի մասին: Բայց Վասիլին քիչ էր խոսում. Սեմյոնն էր, վոր պատմում էր և՛ գյուղի մասին և՛ արշավանքի մասին:

— Յես իմ կյանքում, — ասում էր նա, — ձախորդ որեր շատ հմ տեսել, չնայած՝ երբան ել տարիքով մարդ չեմ: Եղպե՛ս եմ, ախպեր Վասիլի՛յ: Իսկ Վասիլին չիրուխը ռեւին խփելով դատարկեց, վոտքի կանգնեց ու ասում է.

— Մարդիկն են, վոր մաշում են իմ ու քու կյանքը: Մարդուց ավելի դիշատիչ գազան չկա աշխարհիս յերեսին: Գայլը գայլին չի ուտում, բայց մարդը մարդուն հում-հում է ուտում:

— Ձե՛, եգ միկը մի՛ ասա, ախպեր, — գայլը գայլին ուտում է:

— Ե՛, բերնի խոսք եր՝ ասացի: Ի՛նչ վոր եմ, մարդուց ավելի անսիրտ գազան չկա: Մարդու հարուստներն ու ազահուստները վոր չլինեք, ապրել կկարողանայինք: Ո՛վ ասես՝ հենց առիթ է փնտռում, վոր քեզ ճանկը գցի, մի պատառ պոկի ու կուլ տա:

Սեմյոնը մտածմունքի մեջ ընկավ:

— Չգիտեմ, — ախպեր ջան, — ասում է նա. շատ կարելի յե՛ ասածդ ուղիղ եմ:

— Դե վոր ուղիղ եմ, — ասում է Վասիլին, — իմ ու քո խոսելն ել ավելորդ եմ:

Շուռ տվեց յերեսը և առանց մնաս բարով ասելու հեռացավ, գնաց: Տեղից վեր կացավ և՛ Սեմյոնը:

— Հարևան, — ասում է նա, — ախր ինչո՞ւ յես բարկանում:

Հարևանն ել առանց յետ նստելու՝ շարունակեց ճանապարհը: Սեմյոնը յերկար նայեց նրա յետևից, մինչև նա անհայտացավ ճանապարհի ծովածքում, փորվածքի՝ յետևը: Ապա վերադարձավ տուն և ասում է կնոջը.

¹ Մանարանը գործարան է, ուր թել են արտադրում:

¹ Փորվածք — փորած թումբ ճանապարհը հարթելու համար:

— Ի՞նչ ել հարևան ունենք, հմ. մարդ չի, թույն ե:

Բայց և այնպես նրանք հաշտ մնացին. նորից հանդիպեցին իրար, նորից խոսեցին նույն բանի մասին:

— Ե՛հ, ախպեր, մարդիկ վոր չլինեցին, մինք ես բուրձկաներում չեյինք նստի, — ասում եր Վասիլին:

— Ի՞նչ կա վոր... հո բուրձկայում ել կարելի յե ապրել:

— Կարելի յե ապրել, կարելի յե... Ե՛հ, քեզ մարդ ասողին... Շատ ես ապրել, բայց քիչ բան ես սովորել, շատ ես նայել, բայց քիչ բան ես տեսել: Քանի վոր աղքատ ես, կյանքդ կյանք չի, թեկուզ բուրձկայում ապրիր, թեկուզ ուրիշ տեղ: Եդ մարդու ցեցերն են, վոր ամեն տեղ ել ուտում են քեզ. ծծում, քամում են բոլոր ուժդ, իսկ հենց վոր ծերացար, խոզերի առջև են շարտում, ասես մի անպետք քուսպ լինեիր: Դու ի՞նչքան ոռձիկ ես ստանում:

— Քիչ բան ե, Վասիլիյ Ստեփանիչ, տասերկու ուրբի:

— Իսկ յես՝ տասյերեք ուրբի ու կես: Մեկ հարցնող լինի, ինչո՞ւ յե եղպես: Որենքով՝ վարչութչունից նշանակված ե ամենքի համար հավասար, այսինքն ամսական տասնհինգ ուրբի ոռձիկ, վառելիք և լույս: Ո՞վ ե, ուրեմն, քեզ տասերկու ուրբի նշանակել, իսկ ինձ տասյերեք ուրբի 50 կոպեկ: Խնդրեմ ասա: Բա դու ասում ես՝ կարելի յե ապրել: Դու, իհարկե, հասկանում ես, վոր խոսքս եդ մեկու կես ուրբու կամ յերեք ուրբու մասին չի: Թեկուզ ամբողջ տասնհինգ ուրբին վճարեյին: Անցյալ ամիս կայարան եյի գնացել. դիրեկտորն անցավ, յես տեսա նրան: Այսինքն պատիվ ունեցա տեսնելու: Ման ե գալիս առանձին վագոնով, դուրս յեկավ պլատֆորմ, կանգնեց... Այո, յես ես տեղ յերկար չեմ մնա, կգնամ ուր վոր աչքս կտրի:

— Ախր ո՞ր պիտի գնաս, Ստեփանիչ: Ի՞նչ վատ որ ես տեսել եստեղ, վոր լավի յետևից ես ընկել: Եստեղ դու ունես քեզ համար տուն, վառելիք, փոքրիկ կտոր հող: Կինդ աշխատում ե...

— Փոքրիկ կտոր հող... Մեկ տեսնեյիր իմ եդ հողը. մի չորացած ճյուղն ինչ ե, են ել չկա նրա վրա: Ես գարուն կաղամբ տնկեցի, բայց են ել չեղավ. մեկ ել տեսնեմ՝ ճանապարհի վարպետն ե գալիս. «Ա՛յս ինչ բան ե, — ասում ե, — ինչո՞ւ չես զեկուցել, ինչո՞ւ թուլատվութչուն չես ստացել: Իսկույն հավաքիր, դեն գցիր, վոր հետքն ել չմնա»՝ Հարբած եր: Ուրիշ անգամ վոչինչ ել չեր ասի. բայց այս անգամ խելքին այդպես եր փչել... «Յերեք ուրբի տուգանք...»:

Վասիլին մի քիչ ժամանակ լուռ մնաց, չիբուխը քաշեց և կամաց ձայնով ասաց.

— Քիչ եր մնում՝ գլխին տայի, շան սատակ անեյի:

— Քեզ մի բան ասեմ, հարեվան, շատ տաքվուլս մարդ ես դու:

— Չե, տաքվուլս չեմ, հապա ճմարիտ խոսող, ուղիղ մտածող

մարդ եմ յես: Հալա սպասիր, յես հն կարմիր ռեխի հախիցն ենպես գամ, վոր... Ուղեմասի պետին գնամ ու գանգատվեմ: Կտեսնենք:

Յեվ ճիշտ ել գանգատվեց:

II.

Ուղեմասի պետը մեկ անգամ դրեզինով շրջագայում եր ուղին դիտելու: Յերեք որից հետո այդ ճանապարհով պետք ե անցնեյին Պետերբուրգից յեկող նշանավոր պարոններ. նրանք ռեվիզիա՝ եյին անում: Նախքան նրանց գալը պետք եր ուրեմն ամեն բան կարգի բերել: Ավելացրին ու հարթեցին բալաստի՝ քարերը, աչքի անցկացրին շպալները, պնդացրին բեմեռները, ամրացրին պտուտակամայրերը (գայկաները), ներկեցին սյուները, հրամայեցին դեղին ավազ ցանել (պայկաները), ներկեցին սյուները, հրամայեցին դեղին ավազ ցանել կառանցների վրա: Հարեվան կին-պահապանը դուրս եր հանել իր պառավ մարդուն, վոր խոտերը քաղի: Սեմյոնն ամբողջ մի շաբաթ աշխատեց. ամեն ինչ կարգի բերեց, իր կապան ել նորոգեց, մաքրեց, պղնձե թիթեղանշանն ել աղյուսով լավ սրբեց, փայլեցրեց: Աշխատում եր նաև Վասիլին: Դրեզինով յեկավ ուղեմասի պետը. չորս բանվոր պտտում եյին դրեզինի կոթերը. ատամնավոր անիվները բզզում եյին. ժամը 20 վերստ ե սլանում դրեզինը, միայն անիվներն են վոռնում: Արագասլաց յեկավ, կանգ առավ Սեմյոնի բուրձկայի առջև: Սեմյոնն առաջ վազեց և զինվորի պես զեկուցեց:

Դուրս յեկավ վոր ամեն բան կարգին ե:

— Վաղո՞ւց ե դու այստեղ ես, — հարցնում ե պետը:

— Մայիսի 2-ից, ձերդ մեծապատվութչուն:

— Լավ: Շնորհակալութչուն: Իսկ ո՞վ ե հարյուր վաթսու չորրորդ համարում:

Ճանապարհի վարպետը (նրա հետ եր շրջագայում դրեզինով) պատասխանեց.

— Վասիլիյ Սպիրիդոնովը:

— Սպիրիդոնով... Սպիրիդոնով... Հա, այդ նա չե՞, վորն անցյալ տարի նկատողութչուն եր ստացել ձեզանից:

— Հենց նա յի:

— Դե լավ, տեսնենք Վասիլիյ Սպիրիդոնովին: Քշիր: Բանվորներն սեղմեցին դեկը և դրեզինն առաջ շարժվեց:

Սեմյոնը նայում ե դրեզինի յետևից ու մտածում. «Դե հիմի աղմուկը կսկսվի»:

¹ Ռեվիզիա — վերաստուգութչուն:

² Բալաստ — այստեղ նշանակում ե՝ մանր քարեր և ավազ, վորոնք ծածկում են շպալների ու ռեխերի մեջտեղի տարածութչունը:

Յերկու ժամից հետո նա գնաց իր շրջանցումը կատարելու։ Տեսնում է՝ մեկը գալիս է յերկաթուղու փորվածքով, գլխին էլ կարծես մի սպիտակ բան դրած։ Սեմյոնն սկսեց ուշադրությամբ դիտել, տեսնում է, վոր Վասիլին է, ձեռնափայտը ձեռքին, փոքրիկ կապոցը մեջքին, ծնոտն էլ թաշկինակով կապած։

— Հարեվան, ուր եղպես — կանչում է Սեմյոնը։

Վասիլին բոլորովին մոտ յեկավ. յերեսին դուռն չկա, կավիճի նման սպիտակած. աչքերը՝ վայրենի. սկսեց խոսել — ձայնը կտրվում է։

— Բաղա՞ն էս գնում, — ասում է, — Մոսկվա, Վարչության մոտ։

— Վարչության մոտ... Տո, ինչե՞ր ես ասում։ Ուրեմն գնում ես գանդա՞տ անես։ Ձեռք վերցրու եղ բանից, Վասիլիյ Ստեփանիչ, մոռացիր...

— Ձե, ախպեր, չեմ մոռանա։ Մոռանալու ժամանակն արդեն անցավ։ Տեսնո՞ւմ ես, վոնց է գլխիս հասցրել, արյունլիկ արել։ Մինչև մահս չեմ մոռանա, եսպես չեմ թողնի։

Սեմյոնը բռնեց նրա ձեռքերից։

— Ձեռք վերցրու եղ բանից, Ստեփանիչ. ճիշտ եմ ասում քեզ, վոր դրանով քեզ ավելի լավություն արած չես լինի։

— Ի՞նչ լավություն։ Ինքս ել գիտեմ, վոր լավություն



արած չեմ լինի, բայց արդարությունը չպետք է՝ վտաքի տակ տրորվի։

— Դե մի ասա, ախր ինչից սկսվեց եղ բոլորը։

— Ինչից... Ամեն բան նայելուց հետո, դրեղինից ցած իջավ, բուդկան մտավ։ Յես արդեն գիտեյի, վոր շատ պահանջկոտ է լինելու։ Բայց ամեն ինչ արված ու կարգի չե բերված։ Արդեն պատրաստվում եր մեկնելու, յես իմ գանգատն արեցի։ Իսկույն սկսեց բղավել. «Փուչ կենդանի», — ասում է, — այստեղ կառավարչական վերաստուգողներ են գալիս, իսկ դու քո բանջարանոցի մասին ես մտածում, գանգատ տալիս։ Այստեղ, — ասում է, — գաղտնի խորհրդականներ են գալիս, իսկ դու քո կաղամբի մասին ես մտածում։ Ել չհամբերեցի, մի խոսք բաց թողի, ասենք՝ ենպես ծանր խոսք ել չեր, բայց չգիտեմ ինչու սրտին

շատ դիպով։ Ու ենպես հասցրեց, վոր... Իսկ յես անշարժ կանգնել եմ տեղս, հենց իմանաս եղպես ել պետք է լինի։ Նրանք գնացին, յես ուշքս հավաքեցի, յերեսս լվացի և ահա գնում եմ։

— Բա բուդկան...

— Կիսս մնաց։ Նա կորած թմրածներից չի։ Վերջապես յես նրանց ճամբու հերն եմ անիծել։

Վերկացավ Վասիլին, պատրաստվեց գնալու։

— Մնաս բարով, Իվանիչ։ Ձգիտեմ, իմ դործին դիվան-դատաստան կգտնեմ, թե վոչ։

— Միթե վոտքով ես գնալու։

— Կայարան հասնեմ, ենտեղ կխնդրեմ, վոր ապրանքատարի վրա վերցնեն. վաղը Մոսկվայում կլինեմ։

Հարեվաններն իրար հրաժեշտ տվին։ Վասիլին գնաց ու յերկար ժամանակ չեր յերեկվում։ Նրա փոխարեն կինն եր աշխատում, գիշերցերեկ չեր քնում։ Մարդուն սպասելուց բոլորովին ուժից ընկավ նա։ Վրա յերբորդ ուր ռեվիզիան անցավ, վոր բաղկացած եր շոգեքարշից, մեկ բազաժի և յերկու հատ ել առաջին կարգի վագոնից. իսկ Վասիլին չկա ու չկա։ Չորրորդ ուր Սեմյոնը տեսավ նրա կնոջը՝ յերեսն արտասուքից ուռած, աչքերը կարմրած։

— Մարդ վերադարձավ — հարցնում է նա։

Կինը ձեռքերը թափահարեց, վոչինչ չպատասխանեց ու հեռացավ։

III.

Սեմյոնը մի ժամանակ, դեռ տղա հասակում, սովորել եր ուռենուց շվիներ շինել։ Վերցնում եր ուռենու ձողիկը, ծայրին սրտիկ եր կրտուրում շիկացրած յերկաթով, ուր վոր պետք է՝ ծակեր եր բաց անում, ապա ծայրին հարմարեցնում եր փչելու փողիկն ու այնուհետև ինչ ուղում ես նվագիր։ Պարապ ժամանակ նա շատ շվիներ եր շինում ու ապրանքատար մի ծանոթ կոնդուկտորի հետ քաղաք եր ուղարկում՝ շուկայում ծախելու։ Հատին յերկու կոպեկ էյին տալիս։ Ռեվիզիայից յերեք ուր հետո կնոջը թողեց տանը, վոր նա դիմավորի յերեկոյան ժամը 6-ին անցնող գնացքը, իսկ ինքը վերցրեց դանակը և գնաց անտառ՝ իր համար ձողիկներ կտրելու։ Հասավ իր ուղեմասի ծայրին, — այդտեղ ուղին շեշտակի պտույտ եր անում, — ցած իջավ հողաթմբից և անտառի միջով գնաց դաբիվայր։ Կես վերստ հեռու մի մեծ ճահիճ կար, սրա կողքին յերեկի թփեր կային նրա շվինների համար։ Կտրեց մի ամբողջ խուրձ ձողիկներ և ճանապարհվեց դեպի տուն։ Գնում է անտառի միջով։ Արեն արդեն մայր մտնելու մոտ է, չորս կողմը տիրում է մուռլային լուրթյուն. լավում է միայն թռչունների ծվլոցը, վոտի

տակ հլ չորունկներն՝ են ճթճթում: Մի քիչ հլ առաջ գնաց Սեմյոնը, շուտով արդեն յերկաթագիծն ե. ու թվում ե նրան, վոր կարծես մի ուրիշ ձայն ել ե լսվում, կարծես մի տեղ յերկաթը յերկաթին խփելու զնգզնգոց ե լսվում: Սեմյոնն արագացրեց քայլերը: Նրանց ուղեմասում այդ ժամանակ նորոգություն չեր կատարվում: «Ես ե՞նչ կարող ե լինել», — մտածում ե նա: Հասնում ե անտառի ծայրին — առաջը բարձրանում ե յերկաթուղային լիւրը². վերը, յերկաթագծի վրա նստած ե մի մարդ ու ինչ վոր գործի յե: Սեմյոնն սկսեց կամացուկ վել ե բարձրանալ ու դեպի անծանոթն առաջանալ, մտածելով, թե յերևի մեկը յեկել ե պտուտակամեր գողանալու: Տեսնում ե՝ մարդն ելտեղից բարձրաձավ, նիզը ձեռքում. նիզը խոթեց ուսի տակ ու սոսկալի ուժով շուռ տվեց այն մի կողմ: Սեմյոնի աչքերը մթնեցին, ուզում ե ճշար, — չի կարող: Տեսնում ե, վոր Վասիլին ե: Սեմյոնն սկսում ե վազել, իսկ Վասիլին լիւրի մյուս կողմից գլխոնձի տալով փախչում ե՝ նիզն ու բանալին ձեռքում:

— Վասիլիյ Ստեփանիչ, հոգուդ մատաղ, յետ դարձիւր: Տուր ինձ նիզդ, ուսր տեղը դնենք, վոչ վոք չի խմանա: Յետ դարձիւր, հոգիդ սատանի բաժին մի անիւ:

Վասիլին՝ առանց յետ նայելու՝ անտառը մտավ:

Կանգնել ե Սեմյոնը շուռ տված ուսի մոտ. ձեռքում բռնած ձողիկները վայր թափվեցին: Գնացքն ե գալիս, ապրանքայինը չե, այլ մարդատարը: Վոչ մի հնար չկա նրան կանգնեցնելու, դրոշակը չկա: Ռելսն ել նորից վոնց տեղն ամրացնես, դատարկ ձեռքերով ինչպես կարող ես բեմեռներն իրենց տեղը դարկել: Պետք ե վազել, անպատճառ վազել բուդկան՝ հարկավոր գործիքները վերցնելու:

Վազում ե Սեմյոնը դեպի իր բուդկան՝ շունչը կտրված: Վազում ե այնպես, վոր քիչ ե մնում շնչարգելված դետին տապալվի: Արդեն անտառից դուրս յեկավ, հաղիվ մի հարյուր սաժեն տեղ ե մնում, վոր բուդկային հասնի. վոչ ավելի. լսում ե, վոր շչում ե գործարանի շչակը: Ժամը 6-ն ե: Իսկ վեցից յերկու ըոպե անց՝ գնացքն ե անցնելու:

Յեվ Սեմյոնն՝ ասես մտքի աչքերով՝ տեսնում ե, թե ինչպես շոգեքարչն իր ձախ անվով դեմ կառնի շուռ տված ուսի կտորին, կցնգվի, կթեքվի մի կողմ, կսկսի շալախները ճղոտել ե ջարդ ու փշուր անել. ահա ե այն լիւրը, ուր գիծը կիսաբոլորակ ձևով ծովում ե, ու՝ մի ըոպե ես՝ գնացքը կգլորվի տասնմեկ սաժեն բարձրությունից, իսկ այնտեղ, յերրորդ կարգի վագոնում լիքն են մարդիկ՝ փոքր յերեխաներով... Նրանք դեռ նստած են իրենց վագոնում ե գալիք փորձանքի մասին

վոչինչ չգիտեն: Վոչ, բուդկային հասնել ու յետ դառնալ — այդ շատ ուշ կլինի...

Սեմյոնն՝ իր բուդկային չհասած յետ դարձավ ու սկսեց ավելի շտապ վազել: Վազում ե՝ համարյա խելքը կորցրած, ինքն ել չգիտե՝ ինչ անի: Հասավ շուռ տված ուսին. իր ձողիկներն ամբողջ այնտեղ են: Կռացավ վերցրեց նրանցից մեկը, ինքն ել չգիտե՝ ինչու, ե շարունակեց վազել: Նրան թվում ե, վոր գնացքն արդեն գալիս ե: Լսում ե հեռվից նրա սուլոցը, լսում ե՝ ինչպես ուսերը համաչափ ու կամաց սկսեցին դողդողալ: Վազելու ուժ չունի այլևս: Սարսափելի տեղից մի հարյուր սաժեն հեռավորության վրա կանգ առավ նա. հանկարծ մի միտք ծագեց նրա գլխում: Վերցրեց գլխարկը, հանեց այնտեղից իր քամրակե թաշկինակը, կոշկի ճիտքերից ել դուրս քաշեց դանակը:



Դանակով խոցեց նա իր ձախ թևն՝ արմունկից վեր. տաք արյունն աղբյուրի պես դուրս ցայտեց. այդ արյունով շաղախեց նա իր թաշկինակն, ապա հարթեց, ծայրերը շոկեց, կապեց ձողիկին ու պարզեց իր կարմիր դրոշակը:

Նա կանգնել ե ե դրոշակը շարժում ե աջ ու ձախ, իսկ գնացքն արդեն յերևում ե: Զի տեսնի նրան մեքենավարը, մոտ կգա, իսկ հարյուր սաժեն հեռավորության վրա այդ ծանր գնացքը կանգնեցնեն անկարելի բան ե:

Սակայն արյունն անդադար հոսում ե: Սեմյոնը վերքը կողքին ե դեմ տալիս, ուզում ե հոսանքը բռնել, բայց արյունը չի դադարում:

¹ Չորունկներ — չորացած ու դետին թափված ճյուղեր:

² Լիւր — հողով լցված տեղ (насыпь):

Յերեի շատ խորն է վերալորել ձեռքը: Սկսեց գլուխը պտուլտ գալ, աչքերի առաջ սեմացավ, քիչ հետո աչքերը բոլորովին մթնեցին, ականջներն սկսեցին խժժալ: Նա չի տեսնում գնացքը, նա չի լսում աղմուկը. միայն մի բանի մասին է մտածում. «չեմ դիմանա, կընկնեմ, դրոշակը ձեռքիցս բաց կթողնեմ. գնացքը կանցնի վրայից»:

Յեւ սկսեցին աչքերը սեմանալ, ուշքը գնաց, դրոշակը ձեռքից բաց թողեց:

Բայց արյունաշաղախ դրոշակը գետին չընկավ, մի ձեռք արագու-
թյամբ բռնեց դրոշակը և պարզեց վերև՝ մոտեցող գնացքին ընդառաջ:
Մեքենավարը տեսավ այն ու կանգնեցրեց գնացքը:

Վագոններից մարդիկ դուրս թռան, խառնվեցին: Տեսնում են՝ մեկն արյունաթաթախ ընկած է առանց ուշքի. մյուսը կանգնած է նրա կողքին՝ ձողիկին ամրացրած արյունոտ լաթը ձեռքում բռնած:

Վասիլին աչք ածեց իր շուրջը, գլուխը խոնարհեց:

— Կապեցեք ենձ, — ասում է, — ռելսը շուռ տվողը յեա եմ:

Ա. Պ. Չ Ե Խ Ո Վ.

(1860 — 1904)

Անտոն Պավլովիչ Չեխովը ծնվել է Տազանրոգում 1860 թվին: Նրա հայրը հասարակ խանութպան էր:

«Մանուկ հասակումս մանկություն չեմ ունեցել յեա», — ասում էր Չեխովը: Ծանր երկյանքը հոր ընտանիքում. կարիքն ստիպում էր նրան հոր խանութում առևտրով զբաղվել:

Նրա գրական տաղանդը յերեկան յեկավ դեռ այն ժամանակ, յերբ նա գիմնա-
զիայի աշակերտ էր: Իսկ համալսարանում սովորած ժամանակ նա արդեն պատ-
մվածքներ էր գրում և ապ-
րուստի փող էր աշխատում:
Իր գրվածքներում Չեխովը պատկերացնում է մարդ-
կանց զանազան դասակար-
գեր ու խմբեր: Այդ գրվածք-
ներում կան կաշառակեր և
ստրուկի նման չիններին
յերկրպագող պաշտոնյա-
ներ, չքավոր գյուղացիներ,
կուլակներ, կալվածատե-
րեր: Չեխովն ունի նաև



մանուկների համար ու մանուկների մասին գրված պատմվածքներ:
«Վանկա» պատմվածքում նկարագրված է գյուղական չքավոր ըն-
տանիքից դուրս յեկած մի տղա, վոր մանուկ հասակից հարկադրված
էր գյուղից գնալ քաղաք ապրուստ ճարելու համար:

Իր գրվածքներում Չեխովը պայքարում է հետամնացության, խա-
վարի, տգիտության ու ճնշման դեմ:

Չեխովը մեռավ 1904 թվին տուբերկուլյոզից (թոքախտից):

Ինչ տարեկան Վան՝կա ժողովին յերեք ամիս առաջ աշակերտության եյին տվել կողակալը Ալլախիսի մոտ: Ծննդյան ճրագալուցի գիշերն եր, բայց նա չպառկեց քնելու: Յերբ վարպետն իր ընտանիքով և ոգնականերով գնացին յեկեղեցի՝ առավոտյան պատարագին ներկա լինելու, նա վերցրեց վարպետի պահարանից թանաքամանը, ժանգոտած գրչով գրչակոթը, բայց արեց ու առջևը դրեց մի թերթ տրորված թուղթ և սկսեց գրել: Գրելը դեռ չսկսած, նա մի քանի անգամ վախենալով նայեց դռան պատուհանին, աչքերը դարձրեց անկյունի սևացած սուրբ պատկերին, վորի յերկու կողմը ձգված եյին կաղապարների դարակները, ու ծանր հոգվոց հանեց: Թուղթը դրել եր նստարանի վրա, իսկ ինքը չոքել եր առաջը:

«Իմ սիրելի պապիկ, Կոնստանդին Մակարիչ, — գրում եր նա: — Յեմ գրում եմ քեզ այս նամակը: Շնորհավոր ծնունդ. ցանկանում եմ, վոր աստված քեզ պարգևե ամեն բարիք: Յես վոչ հայր ունեմ, վոչ ել մայրիկ. մենակ դու յես մնացել»:

Վան՝կան աչքերը դարձրեց դեպի մուծ լուսամուտը, վորի մեջ պլուպում եր ճրագի արտացոլումը: Նա մի ակնաթարթում իր աչքի առաջ պատկերացրեց պապիկին, վոր ծառայում եր կալվածատեր ժովարովի մոտ իբրև գիշերվա պահապան: Կարճահասակ, նիհար կազմվածքով, բայց չափազանց ժիր, 65 տարեկան մի ծերուկ եր նրա պապիկը: Ժպիտն անպակաս եր նրա յերեսից, աչքերն ել միշտ հարբած եյին: Յերեկները նա քնում ե ծառաների խոհանոցում կամ կատակներ ե անում ճաշ յեփող կանանց հետ, իսկ գիշերներն, իր լայն մուշտակի մեջ փաթաթված, ման ե գալիս տան չորս կողմը և իր թակիչն ե թակում: Նրա յետևից՝ գլուխները կախ՝ գնում են պառավ Կաշտանկան և վորձ շնիկ Վյունը, վորին այսպես եյին կոչում նրա սեմ մորթի ու աքիսի նման յերկարավուն մարմնի համար: Այս շնիկը շատ խոնարհ և կեղծավոր կենդանի յե. միատեսակ հաճույքով ե նայում թե յուրաքինների և թե ոտարների վրա, բայց հավատարմություն չի վայելում: Վոչ մի շուն այնպես վարպետորեն ու ժամանակին չի կարող ծածուկ մոտենալ ու անցորդի վտիցը կաշել, սառցատունը ծլկվել կամ գյուղացու հավը թոցնել: Քանի՜ քանի՜ անգամ դրա համար նրա յետևի վտիցերն եյին ջարդել, մի-յերկու անգամ նրան կախել եյին, ամեն շաբաթ ել կիսամեռ անելու չափ թակում եյին նրան, բայց միշտ ել կենդանանում եր:

Պապիկը հիմա հավանորեն կանգնած ե դարպասի մոտ, աչքերը կկոցած նայում ե գյուղական յեկեղեցու կապ-կարմիր լուսամուտին և, թաղյակներով (վալենկի) գետինը դոփելով, կատակներ ե անում այլ-

և կին ծառաների հետ: Նրա թակիչը գոտկին ե կապած: Յրտից՝ ձեռքերն իրար ե զարկում նա ու կծկվում ե:

— Յեկեք մի-մի քթախոտ քաշենք, — ասում ե նա ու իր քթախոտի տուփն ե հրամցնում կանանց:

Կնանիք ել քթախոտը քաշում ու անվերջ փռտում են: Պապիկի քեֆն ե դալիս անսկարագրելի կերպով. նա ուրախ-ուրախ քրքշում ու կանչում ե:

— Պոկ տուր, սառեց ե:

Քթախոտը տալիս են և՛ շներին: Կաշտանկան փռտում ե՝ դուռնը պտտում և նեղացած մի կողմն ե քաշվում: Իսկ Վյունը, իր խոնարհությունը հաստատելու համար, չի փռտում, այլ ագին ե շարժում:

Յեղանակն ասես՝ հիանալի յե: Ողբ խաղաղ ե, ջինջ և ցուրտ: Մուծ գիշեր ե, բայց ամբողջ գյուղը տեսնվում ե, յերևում են տների սպիտակ կուռերները և ծխնելույններից բարձրացող ծխի քուլաները, ինչպես նաև յեղյամով ծածկված ծառերն ու ձյան կույտերը: Ամբողջ յերկինքը ծածկված ե աստղերով, վորոնք ուրախ-ուրախ պլպլում են. ծիր կաթինը (հարդգողի ճամբան) յերեվում ե այնքան պարզ, վոր ասես տոնի առթիվ ձյունով լվացել ու մաքրել են նրան...:

Վան՝կան խոր շունչ քաշեց, գրիչը թաթախեց ու շարունակեց գրել:

«Իսկ յերեկվա ողբ յես լսվ ծեծ կերա: Վարպետս բռնեց մաղերիցս, քարշ տվեց ինձ բակը և վտաքի փոկով քիթուպուռնգս ջարդեց նրա համար, վոր նրանց յերեսին որորելիս՝ քուռս տարել, քնել եյի պատահաբար: Անցյալ շաբաթ ել վարպետիս կինը հրամայեց, վոր հաւրինգ (սելյոդկա) մաքրեմ. յես մաքրել սկսեցի պոչի կողմից. հենց վոր տեսավ, վերցրեց ձուկն ու նրա գլուխն սկսեց աչքերս կոխել: Վարպետիս ոգնականները ծաղրում են ինձ, ողիտուն են ուղարկում, վոր ողի բերեմ, հրամայում են, վոր վարպետիս վարունգները զողանամ, վարպետս ել դրա համար թակում ե ինձ ինչով վոր պատահի: Կերածս ել վոչինչ բան ե: Առավոտները տալիս են հաց, կեսորին՝ կաշա, իրիկունը՝ նորից հաց. թեյի կամ կաղամբաթանի յերես չեմ տեսնում. այդ բոլորը վարպետս ու նրա ընտանիքի անդամներն են խփշտում: Հրամայում են, վոր նախասնիակում քնեմ ու, հենց վոր նրանց յերեսան լաց լինի, պետք ե նրա որորոցն որորեմ և ինքս իսպառ անքուն մնամ: Պապիկ ջան, պատժու սիրուն՝ մի ճար տրա, վերցրու ինձ այս տեղից ու գյուղ տար, ել հալ չի մնացել մեջս... Վոտդ պաչեմ, պապիկ ջան, մինչև մահս քեզ համար աղոթք կանեմ, միայն թե ազատիր ինձ այս տեղից, թե չե կմեռնեմ...»:

Վան՝կան ծռեց բերանը, կեղտոտ բռունցքը տարավ աչքերը և սկսեց հեծկտալով լալ:

«Յեւ քեզ համար քթախոտ կտրորեմ, — շարունակում եր նա, — աստծուն աղոթք կանեմ, իսկ թե վոր մի բան արեցի, մորթիր ինձ, կաշիս քերթիր: Դու մի կարծիր, վոր յես անգործ կմնամ. յես կաղաչեմ — կպաղատեմ գործակատարին, վոր ինձ կոշիկ սրբող նշանակի, կամ թե չե՝ Ֆեդկայի փոխարեն հոտաղի ոգնական նշանակի: Պապիկ ջան, ել հալ չի մնացել մեջս, մահվան դուռն եմ հասել: Ուզեցի՝ վոտով գյուղ փախչեմ, բայց վոր վոտնաման չունեմ՝ ինչ անեմ, ցրտից եմ վախում: Ու սրա փոխարեն, յերբ յես մեծանամ, քեզ կկերակրեմ և չեմ թողնի, վոր քեզ վիրավորական խոսք ասեն կամ մաղիք դիպչեն. իսկ յերբ մեռնես, աղոթք կանեմ քու հոգու համար այնպես, ինչպես Պելագեյա մայրիկիս համար եմ աղոթում»:

«Իսկ Մոսկվան մեծ քաղաք ե: Տները բոլորն աղաների մեծ տներ են. ձիեր ել շատ կան, բայց վոչխարներ չկան, շներն ել կծողներից չեն: Այստեղ յերեսանները «ավետիս» ման չեն դալիս, յեկեղեցու դասն ել վոչ վոքին չեն թողնում յերգելու: Մի անգամ խանութներէից մեկում յես տեսա ձուկ վորսալու կարթեր՝ իրենց թեւերով, նրանցով կարելի յե ամեն տեսակ ձուկ բռնել. մի կարթ ել տեսա, վորը կարող եր փթանոց լոքոյի ուժին ել դիմանալ: Այստեղ կան նա՛հ այնպիսի խանութներ, ուր յես տեսել եմ ամենտեսակ հրացաններ՝ մեր աղայի ունեցածներին շատ նման. յերեվի ամեն մեկը մի հարյուր ուրբի արժի... Միս ծախված խանութներում յես տեսել եմ և՛ մայրահավ (տետերեվ) և՛ աքար (ռյաբչիկ) և՛ նապաստակներ. բայց թե վորտեղ են վորսում այդ թռչուններին, խանութի ծառայողները բան չեն ասում»:

«Պապիկ ջան, յերբ մեր աղայի տանը նվերներով տոնածառ սարքեն, վերցրու ինձ համար մի վոսկեղոծ ընկուղ ու պահիր փոքրիկ կանանչ սնդուկում: Ուզիր որիորդ Ու՛զա Ինգնատյեֆնայից, ասա՝ Վան՝կայի համար ե»:

Վան՝կան ցնցվեց, հառաչեց ու աչքերը նորից պատուհանին դարձրեց: Նա հիշեց, վոր աղայենց համար տոնածառ բերելու պապիկն եր գնում անտառ և թոռնիկին ել հետն եր վերցնում: Ի՛նչ լավ ժամանակներ եյին: Յեվ պապիկն եր տնքում և՛ սառնամանիքն եր տնքում, իսկ նրանց նայելով և՛ Վան՝կան եր տնքում: Շատ անգամ, դեռ ծառը չկտրած, պապիկը ծխում եր իր չիրուխը, քանի ու քանի անգամ քթախոտն եր քաշում, ծիծաղում եր Վան՝կայի վրա... Մատղաշ յեղեվիները, յեղյամով պատած, անշարժ կանգնած՝ սպասում են, թե արդյոք վորի՛ն ե վիճակված մեռնելու: Հանկարծ, չգիտես վորտեղից, նապաստակն ե սլանում նետի նման... Պապը չի կարող լուռ մնալ, նա կանչում ե.

— Բռնիր, բռնիր, բռնիր: Ա՛յ դու, չստիկ սատանա՛:

Կտրած ծառը պապը քաշում, տանում եր աղայենց տունը. այստեղ ակում եյին նրա դարդարանքով զբաղվել... Ամենից շատ դես ու դեն ընկնողն ու աշխատողն որիորդ Ու՛զա Ինգնատյեֆնան եր՝ Վան՝կայի սիրականը: Յերբ դեռ Վան՝կայի մայրը վողջ եր և իբրև նաժիշտ ծառայում եր աղայենց տանը, Ու՛զա Ինգնատյեֆնան Վան՝կային ծծականֆետ (լիզենեց) եր տալիս. նա՛ պարապուկթյունից ձանձրացած՝ Վան՝կային գրել կարգալ սովորեցրեց և մինչև հարյուր հաշվել. նույնիսկ կադրիլ պարել ել սովորեցրեց: Բայց յերբ Պելագեյան մեռավ, վորը Վան՝կային ուղարկեցին պապի մոտ՝ ծառաների կացարանը, այստեղից ել ճամբեցին Մոսկվա՝ կոշկակար Ալյախինի մոտ:

«Յեկ, սիրելի պապիկս, — շարունակում եր Վան՝կան. — աստծու սիրուն՝ ազատիւր ինձ այստեղից. ախր ինձ անվերջ ծեծում են. ուտել ել շատ եմ ուզում. անքան եմ կարոտել գյուղը, վոր չեմ կարող. գիշերցերեկ լաց եմ լինում: Մի քանի որ ել առաջ վարպետ այնպես զարկեց գլխիս կողապարով, վոր հազիվ ուշքի յեկա: Շան կյանքից ել վատ ե ասլոռւտս. իմ արեվը խավարել ե: Հետո յել բարեվում եմ Ալենային, քու Յեգորկային ու կառապանին: Բայց ահա, եմ հարմոնս վոչ մեկին չտամ: Մնամ քո թոռդ՝ Իվան Ժուկով: Պապիկ ջան, յեկ»:

Վան՝կան գրած թուղթը չորս տակ ծալեց, վրեց ծրարի մեջ, վոր մի որ առաջ գնել եր մի կոպեկով... Փոքր ինչ մտածեց, ապա գրիչը թաթախեց ու գրեց հասցեն՝ «Դյուդ՝ պապիկիս»:

Հետո գլուխը քորեց, մտածեց ու ավելացրեց՝ «Կոնստանդին Մակարիչին»: Նա գոհ եր, վոր նամակը գրելուն խանգարող չեղավ, գրելարկը հագավ և շապիկով, առանց մուշտակի, վազեց փողոց...:

Մսավճառի գործակատարները, վորոնց նա մի որ առաջ հարցրել եր, ասել եյին, վոր նամակները գցվում են փոստային արկղները. այս արկղներից նամակները վերցնում ու փոստային յեռածի կառքերով հասցնում են քաղաքից-քաղաք, գյուղից գյուղ: Վան՝կան վազեց դեպի մոտավոր փոստային արկղը, իր թանկագին նամակը ձգեց արկղի անցքի մեջ:

Քաղցր հույսերով որորված, նա մի քանի ժամից հետո քնած եր խոր քնով... Յերագում տեսավ վառարանը: Վառարանի վերելում նրատած ե պապը, բորիկ վոտները կախ գցած, և կարդում ե խոհարար կանանց նամակը: Վառարանի կողքին ման ե գալիս Վյուռը և պոչն ե շարժում...:

Վիկտոր Հյուգոն ֆրանսիացի գրող է։ Իր գրվածքներում նա մեծ համակրանքով էր նկարագրում չքավորների կյանքը, աղքատներին, թափառաշրջիկներին։ «Գավրոշ» պատմվածքում նա տվել է փարիզեցի խնամազուրկ յերեխայի պատկերը։ Այս գրքուկում մեջ է բերված պատմվածքի միայն վերջին հատվածը, Գավրոշը բարիկադներում։ Նկարագրված է ֆրանսիական հեղափոխությունը և փողոցային այն կռիվները, վորոնց մասնակցում է Գավրոշը և այդտեղ էլ սպանվում է նա։

ԳԱՎՐՈՇ

I.

Փարիզի բուլվարներում և արվարձաններում միշտ թափառում էր տասնմեկ-տասներկու տարեկան մի տղա։ Ընկերները նրան Գավրոշ էին կոչում։ Այս տղան ծիծաղում էր մանկական անհոգությունով, և կյանքը նրա համար մի անարժեք, մռայլ բան էր։ Չափազանց ծիծաղելի յեր նրա հագուստը՝ տղամարդու վարտիք ու կանացի կոֆտ։ Վարտիքը հոր նվերը չէր, ինչպես և կոֆտը մայրը չէր տվել նրան։ Ոտար մարդիկ, խղճալով, իրենց հնոտիներով զարդարել էին փոքրիկին։ Սակայն նա ուներ և՛ հայր և՛ մայր, վորոնք նրան չէին խնամում։

Այս տղան իրեն լավ էր զգում միայն փողոցում։

Ծնողները, քացի տալով, փողոց շարտեցին նրան։

Նա փախավ նրանցից։

Աղմուկ հանող, գունատ, աշխույժ, ուրիշին ծաղրող և ժիր տղա յեր նա, հիվանդոտ, բայց զվարթ դեմքով։ Նա թափառում էր փողոցներում, յերգեր էր յերգում, խաղում էր, կիդտատար ջրերի մեջ բաներ էր փնտռում։ Նա ծիծաղում էր, յերբ նրան փողոցային տղա էին անվանում։ Բարկտունում էր, յերբ սրիկա էին կոչում։ Վոչ տուն ուներ, վոչ հաց և վոչ էլ տաք անկյուն։ Վոչ վոք նրան չէր սիրում. սակայն յա ուրախ էր, վորովհետև ազատ էր։

Թեև նա մեն-մենակ ու անտեղ մնացած յերեխա յեր, բայց և այնպես յերկու կամ յերեք ամիսը մի անգամ խելքին փչում էր՝ «Ժամա-

նակ է, վոր մորս տեսության գնամ»։ Յեվ թողնում էր մեծ բուլվարները, իջնում էր գետափ տանող փողոցներով, անցնում էր կամուրջները, հասնում էր արվարձաններին ու մտնում մի վողորմելի խրճիթ, ուր նրա ծնողներն էին ապրում։ Նա գալիս էր տուն ու աղքատություն էր տեսնում այնտեղ։ Բայց ամենից անախորժն այն էր, վոր վոչ-վոք նրան ծիծաղեիս չէր դիմավորում, ամենքն էլ սառնություն էր յին վարվում հետը, ինչպես սառն էր և՛ նրանց դատարկ ոջախը։

Յերբ ներս էր մտնում, նրան հարցնում էին.

— Վորտեղից ես գալիս։

Նա պատասխանում էր.

— Փողոցից։

Յերբ տնից էր հեռանում, հարցնում էին.

— Ո՞ւր ես գնում։

Նա պատասխանում էր.

— Փողոց։

Այս յերեխան զրկված էր սիրո ջերմությունից այնպես, ինչպես զրկված է արևի ճառագայթներից նկուղում աճող թռչնած խոտը։

II.

Իսկ ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ Փարիզում։

Մթնոլորտը ֆրանսիայում սպառնալից էր։ Ժողովուրդն աղքատ, բանվորներն առանց հացի, Փարիզում քաղաքացիական պատերազմ, լիոնում՝ պրոլետարական ապստամբություն։

Վերացնել աղքատությունը, վերացնել ուժեղի ձեռքով թուլի անարգաբանի շահագործումը, սահմանել աշխատավարձն ըստ աշխատանքի, մանուկների կրթությունը դարձնել պարտադիր ու ձրի, զարգացնել մտքերն՝ առանց թույլ տալու, վոր ձեռքերն անգործ մնան, — ահա թե ինչ էր ասում սոցիալիզմը։

Գինետներում հայտնի կերպով քննարկում էին այն հարցը՝ «Կըզվել, թե՞ սպասել»։ Բանվորներին յերգում էին տալիս, վոր աղղանշանը տրվելուն պես նրանք փողոց դուրս գան։ Ողբվաճառանոցներում թուղցիկներ էին կարդում։ Վոստիկանական գեկույցները հաղորդում էին, վոր այդ թուղցիկներում «կառավարությունն են հայհոյում»։

Բանվորներից մեկն ասում էր. «Մենք յերեք հարյուր հոգի յենք, թե վոր տաք-տաք սու հավաքենք, դա կլինի հարյուր հիսուն ֆրանկ։ Այդ փողով պետք է գնել գնդակ և վառոդ»։

Մյուսն ասում էր, «յերկու շաբաթից մեր թիվը կհասնի քսանհինգ հազար հոգու, և այն ժամանակ մեր ուժը կչափենք կառավարության հետ»։

Յերրորդն ասում եր. «յես գիշերները չեմ քնում, վորովհետեւ փամփուշտ եմ պատրաստում»:

Փողոցներում թողնելիներ եյին փակցվում:

Ահագին Փարիզը թնդանոթի յեր նման. իսկ յերը թնդանոթը լըցված ե, բավական ե մի կայծ, վոր նա կրակի:

1832 թվի հունիսին գեներալ Լամարկի թաղումն եր: Հուղարկավորական փառահեղ թափոնն ընթանում եր Փարիզի փողոցներով: Յերկու գումարտակ՝ սգի կրեպով պատած իրենց թմբուկներով, բերանները դեպի վար դարձրած հրացաններով, տաս հազար ազգային զվարդիականները (պահնորդագործը)՝ թրերը կողքերից կախ դցած, և ազգային զվարդիայի հրետանային մարտկոցները հուղարկավորում եյին գեներալ Լամարկի դագաղը: Նրան ուղեկցում եր անհամար ամբոխը՝ հուղված: Ահարկու խմբերով ընթանում եյին բանվորները՝ բարձոցներ, վորմնադիրներ, հյուաններ, ներկարարներ, ապակի գցողներ, զրաշարներ: Բուրժուան սիրտը դող՝ նայում եր տների պատշգամբներից և լուսամուտներից:

Կառավարութունն աչալըջությամբ հսկում եր ու պատրաստ եր պահում գործը՝ քսան հազար զինվոր քաղաքում և յերեսուն հազար նրա արվարձաններում:

Բաստիլիայի հրապարակում թափոնին միացավ ժողովրդի նոր բազմութուն:

Ամբոխի միջից հանկարծ լավեց մի աղաղակ.

— Դրագունները գալիս են:

Դրագուններն ընթանում եյին քայլով, լուսթյամբ: Նրանց փշտովներն իրենց բուշնի մեջ եյին, թրերը՝ պատյանում, նրանց դեմքին քարացել եր սպասողական մռայլ դրութունը:

Հենց վոր բազմությանն ու դրագուններն իրար հանդիպեցին, փոթորիկը ծայր առավ. սկսեցին քարեր նետել, յերկու կողմից հրացաններ արձակել. դրագուններն սկսեցին թրերով գործել. ամբոխն ընկավ դես ու դեն և փախավ: Փարիզի բոլոր ծայրամասերում հնչեց մարտական կոչը՝

— Ի գէն:


Ուսանողներն ու բանվորներն սկսեցին բարիկադներ շինել: Նրանք ջարդում եյին լապտերները, տակնուվրա եյին անում նկուղները, տափառներ եյին գլորում, դիզում եյին սալահատակի կոպիճները, կուտակում եյին քարեր, կարասիներ, տախտակներ և բարիկադներ եյին շինում:

Այս ամենը կատարվում եր միաժամանակ, քաղաքի բոլոր մասերում. սրան գուգորդում եր ահարկու աղմուկը: Ասես ամալի մի վորոտից հարյուրավոր կայծակներ փայլատակեցին:

Մի ժամ չանցած, կարծես անհամար բարիկադներ բսնեցին դետնի տակից: Յերեկոյան դեմ Փարիզի մեկ յերրորդն ապստամբների ձեռքին եր: Բուրժուազիան ահաբեկված եր: Ամեն տեղ կողպվում եյին դռները, փակվում եյին լուսամուտներն ու փեղկերը:

III.

Գավրոշն, ուրախ և զվարթ, յետ ու առաջ եր վազվզում, մագլցում եր վերե, իջնում եր ցած, աղմկում եր, լողայտապես յերևում եր բարիկադի այս կամ այն մասում և նորից անհայտանում: Գավրոշն արագաշարժ հողմի յեր նման: Նա յերևում եր ամեն տեղ: Նրա հնչուն ձայնը մի լողպե չեր մարում: Ծաղրում եր պարապ-սարապ ման յե-



կողներին, ստիպում եր ծուլերին աշխատել, սիրտ եր տալիս հոգնածներին. մեկին զվարճացնում եր, մյուսին բարկացնում, յերրորդին ձանձրացնում, բոլորին ել անհանգիստ եր անում: Մեկ խմբից մյուսն եր վազվզում, դեսուդեն եր ընկնում և անվերջ աղմկում:

— Ավելի համարձակ: Կուտակեցեք սալահատակի քարերը: Ելի: Տակառներն ավելացրեք: Ձեր բարիկադը փոքր ե, Նա վոչ մի բանի պետք չի: Քարը տվեք այստեղ ամեն բան, ինչ վոր պատահի ձեռներիդ: Քանդեցեք տունը: Այ տեսեք, ահա այն ե, ապակեծածկ դռնով:

Նա ամենքին ձանձրացնում էր.

— Տվեք ինձ հրացան: Ինձ հրացան ե հարկավոր: Ինչո՞ւ ինձ հրացան չեն տալիս:

Վրա հասավ գիշերը. վոչ վոք չերեաց: Մի անորոշ թնդյուն էր լրսվում միայն, և ժամանակ առ ժամանակ՝ հրացանաձգություն. սակայն այդ ձայնը հեռվից էր, գալիս և ընդմիջումներով: Այս յերկարատև ձրգձգումից պարզ էր, վոր կառավարությունն ուժեր ե կուտակում: Հիսուն հեղափոխականներ վաթսուն հազարանոց զորքին եյին սպասում:

Անժուրա անունով հեղափոխականի համբերությունը հատավ: Այսպես անհամբեր են լինում այն անվեհեր մարդիկ, վորոնք անհրկուղեպքեր են նախատեսում: Նա գնաց Գավրոշին գտնելու, Փոքրիկը փամփուշտներ էր պատրաստում գինետան ներքին հարկում, վորն աղոտ լուսավորված էր վաճառասեղանի վրա դրված յերկու մոմով: Փողոցից այս լույսը չէր յերեւում: Վերի հարկերում լույս բոլորովին չէր վառվում:

— Լսի՛ր, — ասաց Անժուրան, — դու փոքր ես, քեզ չեն նկատի: Դուրս յեկ բարեկազներից արագությամբ և աննկատելի կերպով սողա տների յերկայնությամբ, շրջի՛ր փողոցներում: Կդառնաս ու կպատմես ինձ՝ ինչ կա, ինչ չկա:

— Փոքրերն ել կարող են պետք գալ, — հպարտ-հպարտ ասաց Գավրոշը: — Ինչ կա վոր, կգնամ:

Տղան զինվորականի ձևով պատիվ տվեց և ուրախ-ուրախ դուրս վազեց:

IV.

Աշտարակի ժամացույցը զարկեց տասը: Անժուրան և իր ընկերը՝ Կոմբեֆերը հրացանը ձեռքերին նստած եյին տների պատերի և մեծ բարեկազի մեջտեղում: Նրանք լուռ եյին և՛ ականջները սրած՝ աշխատում եյին լսել ամենախուլ և ամենահեռավոր քայլերի ձայնը:

Մի հնչուն, մատղաշ, ուրախ ձայն լսվեց հանկարծ մռայլ լուռության մեջ: Այդ ձայնը յերգում էր մի յերգ, վոր աքլորի կանչով էր վերջավորվում:

— Դա Գավրոշն է, — ասաց Անժուրան:

— Այդ նրա ազդանշանն է, — ասաց Կոմբեֆերը:

Արագ քայլերը վրդովեցին ամայի փողոցի լուռությունը: Գավրոշը, կապիկ ճարպիկությամբ, բարձրացավ հանրակառքի վրա: Ապա բարեկազից ներս ցատկեց:

Հաղիվ շունչ քաշած՝ տղան ասաց.

— Հրացան տվեք ինձ, նրանք գալիս են:

Ասես ամբողջ բարեկազով մեկ՝ ելեկտրական հոսանք անցավ: Ամենքը դեպի հրացանները մեկնեցին ձեռքերը:

— Ուղղւմ ես, ի՞մ կարարինը վերցրու, — հարցրեց Անժուրան:

— Վնչ, յես մեծ հրացան եմ ուղղւմ, — պատասխանեց Գավրոշը:

Գավրոշի հետ համարյա միաժամանակ բարեկազ վերադարձան յերկու ժամապահ մարդիկ: Պահակատեղում մնաց միայն այն ժամապահը, վորը կանգնած էր կամուրջների և շուկայի կողմում: Պարզ էր, վոր այդ կողմից զորքը դեռ չէր սկսել շարժվել:

Բարեկազ պաշտպանողները մարտական դիրքեր բռնեցին:

Անցավ մի քանի րոպե ևս, և անս հայտնապես լսվեց չափածո, ծանր, բազմաթիվ քայլերի ձայնը: Այդ ձայնը՝ հանդարտ և անավոր՝ անդադրում մոտենում էր: Հանկարծ նրա ձայնը կտրեց: Ասես բազմաթիվ մարդկանց շնչառության ձայնն էր հասնում փողոցի ծայրից: Սակայն վոչ-վոք չէր յերեւում: Միայն նրա խորքում, թանձր խավարի մեջ, կարելի յեր նշմարել բազմաթիվ մետաղե թեկեր, վորոնք հաղիվ եյին նկատվում և պապղուն ցանցի եյին նման: Դրանք սվիններն եյին ու հրացանների բերանները, վորոնք ջահերի հեռավոր լույսի մեջ հաղիվ եյին ցոլցվում:

Այդ խավարի մեջ հանկարծ մի չարագուշակ ձայն հնչեց:

— Ո՞վ ե գալիս:

Նույն րոպեյին լսվեց հրացանների շաչյունը:

Անժուրան հնչուն և հպարտ ձայնով պատասխանեց.

— Ֆրանսիական հեղափոխությունը...

— Կրակ, — հնչեց հրամանը:

Փայլեց կրակն ու լուսավորեց բոլոր տների ճակատները, կարծես քողեյապես բացված ու նորից փակված լինել շեկացած վառարանի բերանը:

Մի սոսկալի համազարկ տեղաց բարեկազի վրա: Համազարկն այնքան ուժեղ էր և խիտ, վոր ջարդեց դրոշի ձողակը: Գնդակները դեպան տների քվերին (կարնիզներին) ու յետ թռչելով դեպան բարեկազին և մի քանի հոգու վերավորեցին:

— Ընկերներ, — կանչեց Անժուրան, — խնայեցեք վառուղը: Մի կրակեք, մինչև վոր նրանք փողոցում չերեւան: Յեկ ամենից առաջ դրոշը բարձրացնենք:

Նա վերցրեց իր վոտների տակ ընկած դրոշը:

V.

Շատ սպասելու պետք չեղավ:


Յերիաց առաջին թնդանոթը:

Բարեկազից լսվեց միաբան համազարկը. ծուխը՝ ձյան հյուսի նման ծածկեց թնդանոթը և մարդկանց, մի քանի վայրկյանից ծխի ամպը ցըր-

վեց, թնդանոթն ու մարդիկ նորից յերևացին: Շարունակում եյին դանդաղորեն, հանդարտ կերպով, առանց շտապելու թնդանոթն առաջ շարժել դեպի բարեկազմ: Վոչ-վոչ վերավորված չեր: Ապա հրամանատար սպան թնդանոթը նշան բռնեց նպատակին:

Մի բուպեյում թնդանոթը գետեղեցին փողոցի մեջտեղում: Նրա բաց փողը բարեկազմին եր ուղղված:

— Լցրեք հրացանները, — հրաման տվեց Անժոն'րան:



Կարող ե արդյոք բարեկազմը դիմանալ թնդանոթագնդի հարվածին: Արդյոք պատռվածք չի առաջանա: Հարցը սրանումն է: Այն պահին, յերբ հեղափոխականները նորից հրացաններն եյին լցնում, հրետավորները թնդանոթն եյին լցնում:

Թնդանոթը կրակեց, գունդը թռավ:

— Այստեղ ե, — հնչեց մի ուրախ ձայն:

Գունդն ընկավ բեկորտանքների շեղջակույտի մեջ, ջարդեց հանրակառքի անիվն ու մահացու հարված հասցրեց հին սայլին: Բարեկազմ պաշտպանները բարձրաձայն ծիծաղեցին:

— Շարունակեցեք, — կանչեց մեկը բարեկազմներից՝ հրետավորներին:

Նույն պահին Անժոն'րան, հրակնատի մոտ կանգնել ու լարված ուշադրությամբ դիտում եր թշնամուն:

— Պատին ավելի մոտ թեքեք գլուխներդ, — կանչեց Անժոն'րան: —

Ծունկ չոքեցեք բարեկազմի յերկայնքին:

Բայց Անժոն'րանի այս հրամանը դեռ չեյին կարողացել կատարել, յերբ լսվեց համազարկը:

Յերկուսին սպանեց և յերեքին վիրավորեց նա:

Այսպիսի գնդակոծման բարեկազմը չեր կարող դիմանալ: Կարտեչը պատռվածք բացեց:

Լսվեց մի անհանգիստ ժխոր:

Պաշարվածները սպասում եյին հետեյալ կրակոցին:

Յեկ նա չուշացավ:

Բարեկազմը գնդակոծող յերկու թնդանոթներեց մեկը կարտեչ եր բաց թողնում, մյուսը՝ գունդ (յադրո):

Գնդերը դիպչում եյին բարեկազմի վերի յեղրին, փշրտում եյին կուպիճները (բուլբոնիկ), վորոնց կտորտանքները՝ կարտեչի կարկուտի նման՝ պաշարվածների գլխին եյին տեղում:

— Անհրաժեշտ ե սանձահարել այդ թնդանոթները, — ասաց Անժոն'րան ու կանչեց՝ — կրակ բանալ հրետավորների վրա:

Ամենքն ել վաղուց պատրաստ եյին: Յերկար ժամանակ լուռ մնացած բարեկազմ սկսեց կատաղաբար և ուրախությամբ կրակել. վեց թեյոթ համազարկ իրար հաջորդեցին: Փողոցը լցվեց խեղդուկ ծխով: Մի քանի բուպեյից հետո, բոցերով շերտավորված մշուշի մեջ կարելի չեղավ տեսնել, վոր հրետավորների յերկու յերրորդական մասը դիաթավալ ընկած ե թնդանոթների անիվների մոտ: Կենդանի մնացածները շարունակում եյին թնդանոթները լցնել, բայց կրակոցն արդեն ավելի դանդաղ եր տեղի ունենում:

— Շատ հաջող դուրս յեկավ, — ասաց հեղափոխականներից մեկը դառնալով Անժոն'րային: — Լիակատմբ հաջողութուն ունեցանք:

Անժոն'րան թափահարեց գլուխը և ասաց.

— Մի քառորդ ժամ ել այսպիսի հաջողութուն, և բարեկազմի վրա տասը փամփուշտ ել չի մնա այլևս:

Գավրոշը լսեց այս խոսքերը:

VI.

Բարեկազմում նկատեցին, վոր մեկը ցած իջավ ու կանգնել ե փողոցում, կրակոցի տակ: Գավրոշն ողետնից վերցրեց շշերի մի կողով, դուրս յեկավ սողանքից (լազեյկա) ու անվրդով կերպով սկսեց սպանված ազգային զվարդիականների փամփուշտականներից իր կողովը պարպել փամփուշտները:

— Այդ լինչ ե արածդ, — հարցրին նրան բարեկազմից:

Գավրոշը գլուխը բարձրացրեց.

— Կողովս եմ լցնում:

— Կարտեչները չե՞ս տեսնում:

Գավրոշը պատասխանեց.

— Փոքրիկ անձրև ե գալիս: Մեծ բան:

— Վերադարձիր:

— Հիմա, — առաջ Գավրոշն ու սկսեց վազել փողոցով:

Քսանի հափ սպանվածներ եյին ընկած սալահատակի վրա, փողոցի ամբողջ յերկայնությամբ: Քսան փամփշտակալն ել բարիկաղի համար փամփշտի վորոշ պաշար ե:

Փողոցը ծխով եր լցված, ասեա՛ մառախուղ լինեք: Դրանից եր, վոր ուր-ցերեկով փողոցը համարյա մութ եր: Յերկու կողմի ռազմիկները հաղիվ եյին նշմարում իրար:

Գավրոշին ձեռնտուլ յեր այս մթությունը:

Ծխածածկույթի ե իր փոքր հասակի շտրհիվ նա կարողանում եր առաջ անցնել բավական հեռուները ե զինվորների աչքից աննկատելի մնալ: Առաջի վեց կամ յոթ փամփշտակալները նա պարպեց՝ առանց մեծ վտանգի յենթարկվելու:

Փամփշտակալները պարպելու համար, մեկ դիակից դեպի մյուսն անցնելիս, նա փորսող եր տալիս, գնում եր չորեքթաթ՝ կողովն լստամ-ներով բռնած, կռւչ եր գալիս ու գալարվում:

Առ ժամանակ նա բարիկաղից շատ հեռու չեւ, բայց սիրտ չեյին անում նրան կանչել, վախենալով, վոր դրանով նրա վրա ուշադրու-թյուն կհրավիրեն:

Իսկ նա գնալով ավելի ու ավելի յեր հեռանում: Վերջապես սող տալով հասավ այն տեղ, ուր կրակոցից գոյացած ծուխն այնքան թանձր չեւ:

Կռակներին շինված վորմի յետևում թաքնված հրաձիգները ե փո-ղոցի անկյունում հավաքված զինվորներն իրար ցույց տվին մի ինչ-վոր բան, վոր վեր ու վար եր անում ծխի մեջ:

Հենց նույն բուլեյին, յերը Գավրոշն սպանված սերժանտի փամ-փշտակալն եր պարպում, գնդակը դիպավ դիակին:

— Դրող տանի, — բացականչեց Գավրոշը: — Իմ մեռելին եմ սպա-նում:

Յերկրորդ գնդակը դիպավ սալահատակին, հենց նրա վտռքերի մոտ: Յերրորդը շուռ տվեց նրա կողովը:

Գավրոշն աչք ածեց իր շուրջը ե տեսավ, վոր փողոցի անկյունից են կրակում:

Իր հասակի ամբողջ յերկարությամբ նա վտռքի կանգնեց: Քամին ծածանում եր նրա մազերը: Գավրոշը նայեց իրեն նշան բռնող գվար-դիական զինվորին ու սկսեց յերգել:

Ապա վերցրեց կողովը, նորից մեջը դարսեց թափթփված փամփշտա-ները ե՝ հրաձիգներին մոտենալով՝ սկսեց մի ուրիշ փամփշտակալ պար-պել: Չորրորդ գնդակը չալով անցավ նրա կողքով, բայց նրան չդի-պավ: Գավրոշը յերգում եր:

Հինգերորդ գնդակին նա պատասխանեց յերգի մի նոր տունով:

Սարսափելի յեր տեսարանը: Տղայի վրա կրակում եյին, իսկ նա ծաղրում եր հրաձիգներին: Թվում եր, վոր նա սրտանց գվարճանում եր: Յուրաքանչյուր նոր կրակոցին նա պատասխանում եր յերգի նոր տունով: Նրան անընդհատ նշան եյին բռնում, բայց ամենեւին չեյին կարողանում դիպչել: Նրա վրա կրակելիս՝ ազգային գվարդիականները ծիծաղում եյին: Նա պառկում եր գետնին, թաքնվում եր դարպասի տակ, աներևութանում եր, նորից եր յերևում, փախուստի յեր դիմում, նորից յետ եր վազում, բռնեցքով կարտեչին եր սպառնում, պարպում եր փամփշտակալները ե իր կողովն եր լցնում: Բարիկաղից սարսափով գիտում եյին նրան, սոսկումով եյին նայում վրան, մինչդեռ նա յեր-գում եր: Գնդակները հասնում եյին նրա յետևից, բայց նա գնդակից ել սրնթաց եր: Ասես՝ թաքչելուկ (պրյատիկ) եր խաղում նա մահ-վան հետ: Ամեն անգամ, յերը այդ հրեջը վրա յեր հասնում, տղան նրա քթին եր տալիս:

Բայց, վերջապես, նենգավոր գնդակը հասավ տղային: Գավրոշը յե-րերաց ե ընկավ: Սոսկալի մի ճիչ հնչեց բարիկաղից: Գավրոշը փոքր ինչ բարձրացավ. արյունը ցայտում եր նքա յերեսից: Նա ձեռքերը մեկնեց դեպի այն կողմը, վորտեղից կրակեցին, ու նորից յերգեց: Սա-կայն յերգը վերջացնել չկարողացավ: Յերկրորդ գնդակն ստիպեց նրան դադարել յերգելուց: Այս անգամ նա յերեսն իվար ընկավ սալահատա-կին ե այլևս չշարժվեց:

Փոքրիկ հերոսն սպանված եր:

ԲԱՌԱՐԱՆ

Սու — ֆրանսիական մանր դրամ

Կրեպյ — մետաքսե կամ բամբակե կտորեղեն, վոր հատուկ դործվածք ունի

Դրացում — հեծելազորքի մի տեսակը

Կարաբին — կարճ հրացան, վոր գործ ե ածում հեծելազորքը

Կարտեչ — հրետանիի գունդը, վոր գնդակներով ե լցված

Սերժանտ — ավագ յենթասպա

Հրակնատ — քարե կամ փայտե պատի մեջ բացված անցքը, վորից հրացան, թնդա-նոթ եմ արձակում:

Մ Ա Ք Ս Ի Մ Գ Ո Ր Կ Ի Յ


(Ծնվել է 1868 թվին)

Մաքսիմ Գորկիյ — դա պրոլետարական գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեշկովի կեղծանունն է:

Իր կյանքի մասին Մաքսիմ Գորկին հետևյալն է պատմում: «Ութ տարեկան հասակումս ինձ տվին կոշիկների մի խանութ ծառայիլու վորպես «աշկերտ», բայց մի յերկու ամսից ձեռքերս այրեցի յեռացող

կաղամբի ապուրով և հետ ուղարկվեցի պապիս մոտ: Առողջանալուցս հետո ինձ տվին գծագրողի մոտ իրել «աշկերտ», բայց մի տարուց, կյանքի շատ ծանր պայմանների պատճառով, յես նրա մոտից փախա և շոգենավի խոհարարի մոտ ընդունվեցի վորպես «աշկերտ»:

Հետագա կյանքս շատ խայտաբղետ է և բարդ: Թողնելով խոհարարության գործը, նորից վերադարձա գծագրողի մոտ, ապա զբաղվեցի սրբապատկերների առևտրով, ծառայեցի Գրյազն-Յարիցինի յերկաթուղու պահապանի պաշտոնով, այնուհետև յեղել եմ կրեմլի գործ, հա-



ցագործ: Յեղել են դեպքեր, յերբ յես ապրել եմ հիտ ընկած վորջերում...»:

Սակայն այդպիսի պայմաններում ել Գորկին ձգտում էր գիտություն ձեռք բերելու: Նա շատ եր կարդում և մեծ աշխատանք թափում գրվածքների վրա: Իր առաջին գրվածքը Գորկին տպեց այն ժամանակ, յերբ աշխատում էր Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցներում: Բազմաթիվ են նրա գրվածքները: Շատ բաների մասին է պատմել: Նա միշտ գնում էր բանվորների հետ, բողոքելով աշխատավորների ճնշման դեմ: Վլադիմիր Իլյիչը շատ եր գնահատում մեծ գրողին և հաճախ նամակագրություն ունեւր նրա հետ: Նա գրում էր Գոր-

կուն. «Գեղարվեստագետի տաղանդով դուք միայն Ռուսաստանի բանվորական շարժմանը չե, վոր ահագին ոգուտ տվիք...»:

«Մայիսի 1-ը» մի հատված է «Մայրը» գրվածքից: Այդ գրվածքի համար նյութ են յեղել այն անցքերը, վորոնք կապված են Սորմովոյում 1902 թվին տեղի ունեցած բանվորական մայիսմեկյան ցույցերի հետ:

Յերբ տպագրվեցին առաջին մասերը, ցարական գրաքննությունը պահանջեց դատի տալ Գորկուն: Կառավարությունը վախեցավ, վոր այդ գրվածքով Գորկին հասկացնում է բանվորներին նրանց ճնշման պատճառը և կոչ է անում՝ պայքարելու ճնշողների դեմ:

Ցարական կառավարությունը բազմիցս ձերբակալել է Գորկուն: Նա նստել է նաև Պետրոպոլիսի բերդում, ուր նստեցնում էին կառավարության համար ամենավտանգավոր հեղափոխականներին:

Ներկայումս Ալեքսեյ Մաքսիմովիչը շարունակում է գրել խոշոր աշխատություններ, մերկացնում է մամուլի թշնամիների գրպարտությունները մի սոցիալիստական շինարարության վերաբերյալ:

Կենտրոնացնում պարզեցնում է Գորկուն Լենինի շքանշանով՝ բանվոր դասակարգի և ԽՍՀՄ-ի աշխատավորների առջև նրա ունեցած յեթախտիքի համար:

Գորկու անունը հայտնի յե ամբողջ աշխարհին:

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Համարյա ամեն գիշեր պատերին փակցվում էին թուղթիկներ, վորոնք կոչ էին անում բանվորներին տոնելու մայիսի մեկը: Այդ թուղթիկները փակցվում էին նույնիսկ վոստիկանական վարչության դռներին: Նույնպիսի թուղթիկներ դառնում էին նաև ամեն ուր գործաբանում: Առավոտները վոստիկանությունը հայհոյելով շրջում էր արվարձանում, պոկում և պատռում էր պատերին փակցված բացմանիշակագույն թուղթիկները, իսկ կեսօրին փողոցում կրկին թռչում էին թուղթիկները և ընկնում անցորդների վոտքերի տակ: Բաղադրից ուղարկում էին ծպտյալ խուզարկու վոստիկաններ: Նրանք կանգնում էին փողոցների անկյուններում և աչքերի տակով վոտից մինչև գլուխ գնում գործարանից ուրախ ու զվարթ խոսակցությամբ դեպի ճաշարան գնացող և հետ դարձող բանվորներին:

Տեսնելով վոստիկանության անգործությունը, ամենքն ուրախանում էին, և մինչև անգամ տարեքավոր բանվորները, քմծիծաղ տալով, ասում էին իրար:

— Տեսեք, ինչե՛ր են անում:

Ամեն տեղ մարդիկ հավաքվում էին փողը խմբելով և ջերմորեն

քննարկում հուզիչ կոչը: Կյանքն սկսում եր յեռալ, նա այդ պար-
նան՝ ավելի հետաքրքրական եր դարձել ամենքի համար և ամենքին
ել բերում եր վորևե նորութիւն: Վտմանց — մի նոր պատճառ գրգռու-
վելու և չարամտորեն հայհոյելու խռովարարներին, ուրիշներին՝ մի
անորոշ յերկյուղ և հույս, իսկ յերրորդներին, — վորոնք փոքրամաս-
նութիւն եյին կազմում, — գիտակցութեան մեծ ուրախութիւն, վոր-
իւրեք են բոլորին արթնացնող ուշքը:

Պավելը և Անդրեյը գիշերները համարյա չեյին քնում, տուն եյին
դալիս շշակեց քիչ առաջ, յերկուսն ել հոգնած, ձայները կտրված,
դեմքերը գունատ: Մայրը գիտեր, վոր նրանք ժողովներ են ունենում
անտառում, ճահիճներում: Նրան հայտնի յեր, վոր գիշերները
արվարձանի շուրջը վխտում են ձիավոր վոստիկանութեան հեծելա-
խմբերը, թրե են գալիս ծպտյալ խուզարկուները, բռնելով և խուզար-
կելով առանձին բանվորներին, ցրելով խմբերին, յերբեմն ել մեկին
կամ մյուսին ձերբակալելով: Նա հասկանում եր, վոր ամեն գիշեր
ել կարող են ձերբակալել իր վորդուն և Անդրեյին: Նա համարյա
ուզում եր, վոր այդպես լինի. նրան թվում եր, վոր դա ավելի լափ
կլիներ նրանց համար:

...Յեվ ահա հասավ այդ որը՝ — մայիսի 1-ը: Հնչեց շշակը, ինչ-
պես միշտ, պահանջկոտ և հրամայողաբար:

Բաց-կապույտ յերկնքում լողում եյին սպիտակ և վարդագույն թե-
թե ամպերի հուլիք, վորոնք գոլորշու թնդածայն դղրդոցից վախեցած
թռչում եյին, ասես մեծ թռչուններ լինեյին:

Ուրախ խաղալով՝ լուսամուտից ներս եր նայում արևի վաղորդյան
ճառագայթը: Մայրը մեկնեց իր ձեռքը դեպի ճառագայթը և յերբ սա
ընկավ նրա ձեռքի մաշկի վրա, նա մյուս ձեռքով կամաց շոյեց այն և
ժպտաց մտադրալ ու քնքշորեն:

Յերկրորդ շշակը հնչեց ավելի թույլ, վոչ այնպես վստահ, դողդոջ ձայ-
նով, թավ և խոնավ: Մորը թվաց, վոր այսօր սովորականից ավելի
յերկար և հնչում շշակը:

Վաղելով ներս մտավ կրակոտ աչքերով Ֆեդյա Մազենը, վորի այ-
տերին կարմիր բծեր եյին յերևում: Յնծութեան հուզմունքով համակ-
ված, նա վերջ տվեց սպասողական ձանձրոյթին:

Սկսվեց, — ասաց նա: — Ժողովուրդը շարժվեց:

Նա փողոց և դուրս գալիս: Ամենքի դեմքը, կարծես կացիններ լինեն:
Գործարանի դարբասի առաջ ամբողջ ժամանակ կանգնած եյին Վեսով-
շիկովը Գուսև և Վասյայի և Սամոյլովի հետ, ճառեր եյին ասում: Շա-
տերին հետ ուղարկեցին տուն: Դեհ, գնանք, ժամանակն ե: Արդեն
ժամի տասն ե:

Յերբ մայրը դուրս յեկավ փողոց և ողում լսեց մարդկանց ձայ-
ների դղրդուն՝ այնքան հուզված և սպասողական, յերբ տեսավ ամե-
նուրեք լուսամուտներում և դարբասների առջև խումբ-խումբ մարդիկ,
վորոնք հետաքրքիր հայացքները չեյին հեռացնում նրա վորդու և Անդ-
րեյի վրայից, — նրա աչքերին յերևաց մի մառախլապատ բիծ, վորը
յերերվում եր և ընդունում մերթ քաց-կանանչ, մերթ մուլթ-գորշ գույն:
Նրանց վողջունում եյին և սիրո այդ վողջունների մեջ կար մի
առանձին բան:

Փողոցի անկյունի հետեւը, նեղ նրբափողոցում, հավաքվել եր մոտ
հարյուր հոգուց բաղկացած մի ամբոխ, վորի խորքից լսվում եր Վե-
սովշիկովի ձայնը:

— Մեր արյունն են քամում, ինչպես լորամբդից հյուսթը, — այս
անպաճույճ խոսքերն եյին թափվում մարդկանց գլխին:

— Ծիշտ ե, — սիւսերան պատասխանեցին մի քանի հնչյուն ձայներ:

— Տղան աշխատում ե, — ասաց Անդրեյը, — ապա մի գնամ ողնեմ
նրան:

Նա կռացավ և մինչև Պավելը նրան կպահեր, վոր չգնա, նա վոլո-
րապտույտ, իր յերկար, ճկուն մարմնով նետվեց ամբոխի մեջ, ինչպես
խցահանը խցանի մեջ:

Լսվեց նրա քաղցրահնչյուն ձայնը:

— Ընկերներ, ասում են վոր աշխարհիս յերեսին զանազան ժողո-
վուրդներ են ապրում — հրեաներ և գերմանացիներ, անգլիացիներ և
թաթարներ: Մարդիկ զանազան տեսակ են հանգնվում և տարբեր լե-
զուներով խոսում, բայց վոր տեսնեք, թե հարուստ ֆրանսիացիները,
գերմանացիներն ու անգլիացիներն ինչպես են վարվում բանվոր ժո-
ղովրդի հետ, այն ժամանակ կհամոզվեք, վոր նրանք բոլորն ել բան-
վորի համար թալանչիներ են: Գրողը տանի նրանց բոլորին:

Ամբոխի միջից մեկը ծիծաղեց:

— Իսկ յեթե մյուս կողմից նայենք, ապա կտեսնենք, վոր ֆրան-
սիացի բանվորն ել, թաթարն ել, թյուրքն ել նույն շան կյանքն են
քաշում, ինչպես և մենք՝ ռուս բանվորներս:

Փողոցից ավելի ու ավելի ժողովուրդ եր գալիս, և մարդիկ, մեկը
մյուսի հետեւից, լուռ, վզերը յերկարացնելով, վտառների մատների ծայ-
րերի վրա բարձրացած, զոռով խցկվում եյին նրբափողոցը:

Անդրեյը ավելի բարձր պսեց խոսել:

— Վոստիկանները, — գոռաց ամբոխի միջից մեկը:

Փողոցից դեպի նրբափողոցը մտրակները թափահարելով շեշտակի
գալիս եյին մարդկանց վրա չորս ձիավոր վոստիկաններ և գոռում եյին.

— Տրվեք:

Մարդիկ խոժոռագեմ և ակամա ճանապարհ եյին տալիս ձիերին:

Մի քանիսը պատերին եյին բարձրացել:

— Խոզերին ձի յեն նստեցրել, նրանք ել խանչում են՝ մենք ել դռնապաններ ենք, — լսվում եր մեկի բարձրահնչուն կրակոտ ձայնը:

Անդրեյը մենակ մնաց նրբափողոցի մեջտեղում: Գլուխները թափ տալով նրա վրա եյին խոյանում յերկու ձի: Նա մի կողմ քաշվեց իսկ մայրը, բռնելով նրա ձեռքից, քաշ ավեց իր հետևից, մթմթալով:

— Խոստացել եյիր Պաշայի հետ, իսկ հիմա ինքդ մենակ ես մտնում կրակը:

— Ներողություն, — ասաց Անդրեյը, ժպտալով:

Հնչեց շշակը, իր սև հնչյուններով կլանելով մարդկանց խոսակցությունը: Ամբոխը ցնցվեց, նստողները վերկացան, մի բոլոր ամեն ինչ լեց, ուշադրությունը լարվեց և շատ դեմքեր գունատվեցին:

— Ընկերներ, — հնչեց Պավելի ձայնը ուժեղ և ամուր:

Չոր, տաք մառախուղն այրեց մոր աչքերը, և նա հանկարծ կազդուրված մարմին մի շարժումով կանգնեց վորդու հետևը: Ամենքը յերեսները շուռ ավին դեպի Պավելը, շրջապատեցին նրան, ինչպես յերկաթի բեկորները՝ մագնիսի մի կողմը:

Մայրը նայում եր նրա յերեսին և տեսնում եր միայն նրա աչքերը հալարտ և համարձակ, կրակոտ...:

— Ընկերներ, մենք վորոշել ենք բացահայտորեն հայտարարել, թի ով ենք մենք: Մենք այսօր բարձրացնում ենք մեր դրոշը, ճշմարտության և ազատության դրոշը:

Ոգում փայլատեց մի սպիտակ և յերկար ձողակ, թեքվեց, ձեղքեց ամբոխն ու անհայտացավ նրա մեջ. ապա, մի բոլորից հետո, բանվոր ժողովրդի դրոշի լայն կտավը, վորպես մի կարմիր թռչուն, ծավալվեց վեր նայող դեմքերի վրա:

— Կեցցե՛ք բանվոր ժողովուրդը, — կոչեց նա:

Հարյուրավոր ձայներ դղրդակոչ արձագանքեցին նրա բացակայողությանը:

Ամբոխը յեռում ե: Նրա միջով դեպի դրոշի կողմն եյին ճանապարհ բաց անում նրանք, ովքեր հասկացել եյին նրա նշանակությունը:

Պավելի կողքին եյին կանգնել Մադենը, Սամոյլովը, Գուսևները: Նիկոլայը, գլուխը կռացրած, հրում եր մարդկանց. նրան անծանոթ ինչ վոր մարդիկ, ջահել, բացավառ աչքերով, նրան մի կողմ եյին հրում...:

— Կեցցեն՝ բոլոր յերկրների բանվորները, — կոչեց Պավելը: Յեվ գնալով ավելի ուժեղ և ավելի ցնծագին եր դառնում հազարավոր շրթունքների վողեցունց ձայնը՝ վորպես արձագանք նրա կոչին:

Մայրը, ջերմ ժպտը յերեսին, գոռում եր հետևից և նրա գլխավերևից նայում եր իր վորդուն և դրոշին: Նրա շուրջը փայլատում եյին ուրախ դեմքեր, գույնզգույն աչքեր: Ամենից առաջ դնում եր իր վոր-

դին և Անդրեյը: Նա լսում եր նրանց ձայնը: Անդրեյի մեղմ և խոնավ ձայնը խառնվում եր իր վորդու թանձր և թավ ձայնին և կազմում մի ամբողջական հնչյուն:

Յեկ, բարձրացիր, բանվոր ժողովուրդ,

Դիմիր կովի դաշտ, դու սոված բազմություն...

Յեվ ժողովուրդը ընդառաջ եր վազում կարմիր դրոշին. նա ինչ վոր գոռում եր, խառնվում եր ամբոխին և նրա հետ միասին վերադառնում ու նրա աղմուկը մարում եր յերգի հնչյուններում, — այն յերգի, վորը սանը ուրիշ յերգերից ավելի կամաց եյին յերգում, սակայն փողոցում նա հնչում եր անյերբեր, շեշտակի, ահեղի ուժով: Այդ յերգի մեջ հրնչում եր յերկաթյա արիությունը, կոչ անելով մարդկանց դեպի ապագան տանող հեռավոր ճանապարհը, ազնվորեն ասում եր ուղու դժվարությունների մասին:

Յեվ ահա մայրը մնաց ամբոխի պոչում, այնպիսի մարդկանց մեջ, վորոնք շարժվում եյին առանց շտապելու, անտարբեր կերպով դեպի առջև նայելով այն հանդիսատեսների սառը հետաքրքրությամբ, վորոնց արդեն նախորոք հայտնի յե տեսարանի վախճանը:

Գնում եյին և ցածր ձայնով, վստահ ասում եյին.

— Մեկ ջոկատամասը կանգնած ե դրոցի մոտ, մյուսը՝ գործարանի...

— Նահանգապետն և յեկել:

— Ճիշտ ե:

— Այո, ինքս տեսա:

Մեկն ուրախ-ուրախ հայհոյեց և ասաց.

— Բայց և այնպես մեզանից սկսել են վախենալ: Յեվ գորք, և, նահանգապետ:

— Իմ աղիզները, — տրոփում եր մոտ սիրտը:

Բայց խոսքերն անկենդան և սառն եյին հնչում նրա շուրջը: Նա արագացրեց քայլերը, վորպեսզի հեռու լինի այդ մարդանցից, ու նրա համար դժվար չեք նրանց դառնադիտու և ծուլ քայլվածքից առաջ անցնել:

Յեվ հանկարծ ամբոխի գլուխը կարծես դեմ առավ ինչ վոր բանի. նրա մարմինը, առանց կանգ առնելու, յերեբաց դեպի հետ՝ հուզումնալից, լուռ թնդյունով: Յերգը նույնպես ցնցվեց, ապա հնչեց ավելի արագ և քաջահնչյուն: Յեվ նորից ցած իջավ հնչյունների հոծ ավիճը, դեպի յետ սողաց: Մեկը մյուսի յետևից յերգիչների խմբից պակասում եյին ձայները, լսվում եյի առանձին բացականչություններ, վորոնք աշխատում եյին առաջվա բարձրությանը հասցնել յերգը, հրել այն դեպի առաջ:

Յեւ, բարձրացիր, բանվոր ժողովուրդ,

Դիմիր կռիւի դաշտ, դու սոված բազմութիւն...

Բայց չկար այդ կռիւի մեջ ընդհանուր, միահամուռ վոտահռթիւն և անհանգստութիւնն արդեն թրթռում եր նրա մեջ:

Վոչինչ չտեսնելով, չիմանալով, թե ինչն սլատահել առջևում, մայրը հրում եր ամբոխին, արագ-արագ առաջ քայլելով, իսկ դիմացի մարդիկ դեպի հետ ելին գնում, վոմանք գլուխները քարշ և հոնքերը կիտած, վոմանք ամոթահար ժպտալով, վոմանք ել ծաղրաբար սուլելով: Նա թախիծով դիտում եր նրանց դեմքերը, նրա աչքերը լռելյայն հարցնում ելին, խնդրում, կանչում...

— Ընկերներ, — հնչեց Պավելի ձայնը: — Զինվորներն ել նույնպիսի մարդիկ են, ինչպես և մենք: Նրանք չեն խփի մեզ: Ինչո՞ւ պիտի խփեն: Նրա համար, վոր մենք պաշտպանում ենք ամենքին հարկավոր ճշմարտութիւնը: Զի՞ վոր այդ ճշմարտութիւնը նրանց ել ե հարկաւ: Վոր: Առ այժմ նրանք չեն հասկանում այդ, բայց արդեն մոտ ե այն ժամանակը, յերբ նրանք ել կկանգնեն մեր շարքերում, յերբ նրանք չեն գնա թալանների և սպանութիւնների դրոշի տակ, այլ կերթան մեր, ազատութեան դրոշի տակ: Յեւ վորպեսզի նրանք ալիկի շուտ հասկանան մեր ճշմարտութիւնը, մենք պետք ե գնանք դեպի առաջ: Առաջ, ընկերներ, միշտ դեպի առաջ:

Պավելի ձայնը հնչում եր հաստատ, խոսքերը զրնգում ելին ողում հստակ ու պարզ, բայց ամբոխը քայքայվում եր, մարդիկ՝ մեկը մյուսի հետեւից հեռանում ելին աջ և ձախ, դեպի տները, հենվելով պատերին: Այժմ ամբոխն ուներ սեպի ձև, վորի սուր ծայրն եր Պավելը: Սրա գլխովերը կարմիր գույնով վառվում եր բանվոր ժողովուրդի դրոշը: Յեւ մեկ ել ամբոխը նմանում եր սև թռչնի, վորը, լայն տարածելով իր թևերը, ուշադրութիւնը լարել և պատրաստվել ե բարձրանալ ու թռչել, իսկ Պավելը նրա կտուցն եր...

Մայրը տեսնում եր, վոր փողոցի վերջում, դեպի հրապարակը տանող անցքը փակելով, կանգնած ե միակերպ առանց դեմքերի մարդկանց գորշ պատը: Նրանցից յուրաքանչյուրի ուսին փայլում ելին պող ու նեղ սվինների սուր շերտերը: Յեւ այդ պատից, լռակյայց, անշարժ, պաղութիւն եր փչում բանվորների վրա: Նա դեմ եր առնում մոր կրծքին և ներս թափանցում նրա սիրտը:


Մայրը հետ նայեց և տեսավ, վոր մինչ այդ փողոցում լցված հոծ ամբոխն այժմ կանգնած ե անվճռականորեն, վարանման մեջ, նայում ե՝ ինչպես իր շարքերից հեռանում են և տանում դրոշը: Նրանց հետևում ելին մի քանի տասնյակ մարդիկ և դեպի առաջ արած ամեն մի

քայլ ստիպում եր վորեւե մեկին մի կողմ քաշվել, կարծես փողոցի մեջ տեղի ուղիւն ներբաններն այրելու չափ շիկացած լինելը:

— Կվերանա կամայականութիւնը... մարգարեանում եր յերգը ֆեդայալի շրթունքներում...

— Յեւ կապտամարմի ժողովուրդը... վստահաբար և անհղորեն արձագանքում եր նրան ուժեղ ձայների խումբը:

Բայց յերգի ներգաշնակ յեկեջների միջից դուրս ելին թռչում խուլ խոսքեր.



— Հրաման ե տալիս...

— Հրացանը պատրաստ... հնչեց դիմացից մի սուր ձայն:

Սվինները վոլորապտույտ ճոճվեցին ողում, ընկան և ձգվեցին դրոշին դեմ ու դեմ, խորամանկորեն ժպտալով:

— Մահարշ:

Մայրը նայում եր անթարթ աչքերով: Զինվորների գորշ ալիքը ծփծփաց և ձգվելով փողոցի տարող լայնքով, համաչափ, սառնադեմ առաջ շարժվեց, տանելով սուղեից պողպատե արծաթափայլ առամներ:

ցանցառ սանրը: Մայրը, լայն քայլելով, կանգնեց վորդուն ավելի մոտ, տեսավ, թե ինչպես Անդրեյը նույնպես մի քայլ առաջ անցավ Պավելից և իր յերկար մարմնով նրա դեմը կտրեց:

— Կողքիցս գնա, ընկեր, — լսվեց Պավելի սուր ձայնը:

Ավելի ու ավելի եյին մոտենում իրար կարմիր դրոշի մարդիկ և գորշ մարդկանց խիտ շղթան:

Մայրը իր հետևից լսեց փախչողների դոփյուշներ: Լսվում էյին ընկ-
ձված, հուզված ձայներ:

— Տրվե՛ք, տղերք:

— Վրասով, փախի՛ր:

— Պավլուխա, յետ դարձի՛ր:

— Պավել, դրոշը ձգի՛ր, — մոռյալ կերպով ասաց Վեսովշչիկովը:

— Տուր ինձ, յես կթագցնեմ:

Նա ձեռքով բռնեց ձողակը, դրոշը դեպի յետ ճռճեց:

— Թող, — գոռաց Պավելը:

Նիկոլայը ձեռքը հետ քաշեց, կարծես մի բան այրեց: Յերգը մա-
րեց: Մարդիկ կանգ առան, խիտ շրջապատելով Պավելին, բայց նա
դուրս պրծավ և անցավ առաջ:

Տիրեց լուռթյուն, հանկարծ, մի անգամից, կարծես վերելից իջավ
նա և գրկեց մարդկանց թափանցիկ ամպերով: Դրոշի տակ կանգնած
էյին մոտ 20 մարդ, վոչ ավելի, բայց կանգնած էյին հաստատ, իրենց
համար յերկյուղի զգացմունքով լի և մի բան ասելու անորոշ ցանկու-
թյուն ունեցող մորը դեպի իրենց գրավելով:

— Պարտչիկ, խլե՛ք նրանից այդ, — հնչեց բարձրահասակ ծերունու
հանդարտ ձայնը: Մեկնելով ձեռքը, նա ցույց տվեց դրոշի վրա:

Մի փոքրահասակ սպա իսկույն մոտեցավ Պավելին, բռնեց դրոշի
ձողակը և ձգալով կանչեց.

— Բաց թող:

— Ձեռքդ քաշի՛ր, — բարձր ձայնով ասաց Պավելը:

Դրոշը դողդողում էր և կարմրին տալիս ոգուժ: Նա թեքվեց
դեպի աջ ու ձախ և նորից ուղիղ կանգնեց — սպան քաշվեց մի կողմը
և նստեց գետնին: Մոր մոտից անսովոր արագությամբ սլացավ Անդ-
րեյը, վորը դեպի առաջ էր մեկնել սեղմած բռունցքով ձեռքը:

— Բռնեցե՛ք դրանց, — վտար գետնին խփելով, գոռաց ծերունին:

Մի քանի զինվոր առաջ անցան: Նրանցից մեկը թափահարեց
հրացանի կոթը, — դրոշը դողդողաց, թեքվեց և անհայտացավ զինվոր-
ների գորշ շարքում:

— Ափսոս, — բացականչեց մեկը վշտացած ձայնով:

Մայրն էլ գոռաց զազանի վռնացող ձայնով: Բայց, վորպես պա-
տասխան, զինվորների բաղմության միջից լսվեց Պավելի սլարդ ձայնը:

— Յտեսությո՛ւն, մայրիկ, ցտեսությո՛ւն, սիրելիս...

— Վե՛ղջ ե: Հիշե՛ց, — յերկու անգամ թնդաց մոր սիրտը:

— Յտեսությո՛ւն, մայրիկ:

Բարձրանալով վտարների մատների վրա և ձեռքերը թափահարելով,
մայրն աշխատում էր տեսնել նրանց և տեսավ զինվորների զլխների
վրայից Անդրեյի կլոր յերեսը: Նա ժպտում էր, նա բարեւում էր
նրան:

— Սիրելիներս... Անդրեյո՛ւշա... Պա՛շա... գոռում էր նա:

— Յտեսությո՛ւն, ընկերներ, — բացականչեցին զինվորների բազ-
մության միջից:

Նրանց պատասխանեց քանիցս կրկնվող պտուտված արձագանքը,
վոր լսվում էր վերևից՝ լուսամուտներից, կտուրների վրայից:

Դ Ե Մ Յ Ա Ն Բ Ե Դ Ն Ի Յ

(Ծնվել է 1883 թվին)

1911 թվին, բոլշևիկյան «Զվեզդա» լրագրի խմբագրությունն ստացավ Վլադիմիր Իլյիչի հետևյալ հարցը՝ «Այդ հիմ է Դեմյան Բեդնին՝ շատ տաղանդավոր գրողը»:

«Դեմյան Բեդնին — ֆուսսակար մուժիկ» կեղծանունով իր գրվածքներն եր տպում դեռ այն ժամանակ մեր արդի բանաստեղծ՝ բոլշևիկ Յեֆիմ Ալեքսեյեվիչ Պրիլուկովը:

Նա առական եր գրում, վորոնց մեջ խարաղանում եր աշխատավորների ամեն տեսակ թշնամիներին:



Քաղաքացիական պատերազմի ժամանակ Դեմյան Բեդնին ման յեկավ բոլոր ճակատամարտերը: Նրա վոտանավորները մարտական տրամադրություն եյին հրահրում կարմիր բանակայինների շարքերում: Այդ վոտանավորներն, սպիտակ զինվորներին, վորոնց խաբելով ռազմաճակատ եյին տարել, բացատրում եյին, վոր նրանք գնացել են բանվորների և գյուղացիների շահերի հակառակ:

Դեմյան Բեդնին տեսնում եր Կարմիր բանակի հերոսական սխրագործությունները և իր վոտանավորներից շատերը նվիրեց Կարմիր բանակին: Այսպես են՝ «Խորհրդային պահակը» և «Պատիվ կարմիր բանակայինին»:

Պրոլետարիատին մատուցած հատուկ ծառայությունների համար, իր պարզ և բոլորին հասկանալի բանաստեղծությունների համար Դեմյան Բեդնին պարգևատրված է Կարմիր դրոշի շքանշանով իսկ հետո յե՛լ՝ Լենինի շքանշանով:

„ՄԻՆՉԵՎ ԵՍՏԵՂ“

Թըջված ու ծակ տրիխներով,
Հագած բարակ ցնցոտիներ,
Տոպրակն ուսին որորվելով
Ճանապարհ եր գնում մի ծեր:

Գնում է նա դեպի ծուխը,
Ահա մի գյուղ սարի տակը,
Գյուղի ծերին, մի տան վրա
Ծածանվում է դրոշակը:

Եդ տան պատին պլակատ կա՝
Հարբած դեմքով ցարը վրան:
— Բարի որ ձեզ: — Բարով յեկար,
Յե՛վ ամբոխը պատեց նրան:

— Պապի, գիշերն եստեղ մնա,
Յեղանակը թաց ու թին է:
— Ես ի՞նչ գեղ եմ — Պուզաչովկա,
Ես ել ոգնող կոմիտեն է:

Մեր ճամբորդին առավոտյան
Լավ հագրցրին վոտքից դուլիս:
Տվին շապիկ, շալվար, վարտիք,
Կոշիկ, տաք քուրք ու արխալուխ:

— Հագի, պապի, մի ամաչի:
Մենք շատ յերկար համբերեցինք:
Ես բոլորը հարուստների
Մնդուկներից դուրս բերեցինք:

Քուրքը հագավ ու հուզմունքից
Խոր հառաչեց ծերը բարի,
— Մինչև եստեղ, զավակներս,
Յես քայլել եմ ութսուն տարի:

Ի Ս Բ Ա Խ

(Ծնվել է 1904 թվին)

ԼԵՆԻՆԻ ՈՒ ԼԻ-ՉԱՆԻ ՄԱՍԻՆ

Պեկինում մարդիկ կան բոլոր տեղերից:
Պեկինում այնքան փողոցներ:
Փողոցում Լի-Չանը յերկար թափառեց,
Թափառեց կուլին գործադուրկ:

Ու հետո — դաշտերում... Վերահսկիչը չար
Ամեն ուր ծեծում եր Լի-Չանին,
Այն որից, ինչ Լի-Չանը մշակ դարձավ՝
Զթողին մեջքը հանգստանա:


Դաշտերում, ուր բանում եր թեյը բուրավետ՝
Մի անգամ փչեց տաք մի քամի.
Ու թիկնեղ մի ճամբորդ կորցրեց դաշտերում
Մի կտոր թերթ լրագրի:

Հոգնաբեկ ու ծեծված բանվորը վերցրեց
Ու կարգաց պատմությունը հուզիչ.
Մի յերկրում հիմա տեր, ղեկավար են դարձել
Վոչ թե ժանդ մանդարինը — կուլին:

Ու այնտեղ տրորած այդ թերթի դեմքին,
Վոր ընկել եր դողդոջ ծունկերին —
Նկարված եր ավագը ազատ այն յերկրի,
Ու գրված եր անունը — Լենին:

Ու թեյի դաշտերում կուլիները խղճուկ —
Այն որից՝ թե ցերեկ թե գիշեր, —
Անհամար հեքիաթներ են հյուսում,
Թե՛ Լենինը նրանց կհիշե:

Թե պիտի տապալվի մանդարինը:
Դաշտերից բռնձի ու թեյի



Լենինը — դեպի ըմբոստ Պեկինը —
Կկանչի բոլոր կուլիններն:

Վոնգվեց Լի-Չանը
Կրկին ընկավ Պեկին.
Նա դապում եր մաղձն իր:
Փողոցներն անթիվ են: Ամբոխը մի հեղեղ:
Լի-Չանին կրծում է քաղցը:

Ու հանկարծ...
Լսեց Լի-Չանը
Ճիչը լրագրավաճառի:
Ճիչում հուզում եր հնչում:
«Մեռավ ամենամեծ բոլշևիկը.
«Ռուսաստանում,
«Լենինը
«Մեռավ...»

Մեռավ Լենինը: Նա, վոր թերթիկից
Ապստամբության նշանն եր տվել,
Չեր լացել յերբեք Լի-Չանը մորակից.
Իսկ այժմ —
Լի-Չանը դառը հեկեկաց:

Դարձան, վորոքեցին ամիսներ, շաբաթ,
Ու դարձավ Լի-Չանը ուրիշի —
Լի-Չանը մի գրաստ փոշեպատ —
Լի-Չանին ու՛ր ասես՝ չքչեց:

Տեսնում է
Անթիվ կուլիններ...
Փողոցով հոսում են նրա դեմ:
Տեսնում է
Շողշողուն սուրբեր ու սվիններ —
Ճրճում,
Պարպում են կուլինները մերկ:
Տեսնում է
Չինատառ կարմիր դրոշներ:

Ու փողոցի լայնքով
Այդ բոլորի վրա
Գալիս է Լենինը.



Լենինը,
Այնպես,
Ինչպես այն թերթի տրորած դեմքին
Աչքը կկոցում է Լենինը,
Կանչում է Լի-Չանին
— Յեկ...

Յեկ...
Ու մատը մեկնած
Նշում է վեր —
Դեպի թաղերը մաքուր ու մեղկ:

Ծալվում են ծնկերը Լի-Չանի,
Հուզմունքից ծնոտն է դողում:
— Վոչ վորի, վոչինչ չգիշանել:
Հեղեղով ամեն ինչ վողողել:
Ու հեղեղը առավ Լի-Չանին,
Լի-Չանի թոքերը լայնացան —
Ցնծաղեմ Յին — Չոն
Լի-Չանին
Ցերկարեց փայլուն մի հրացան:
Նա տվեց պարկերով փափուշտ:
Վարժեցրեց հրացան պարպելուն,
Ու հիմա մեր Լի-Չանը անհաշտ
Պայքարում է շքեղ Պեկինում:

ԲԱՌԱՐԱՆ

Կուլի — բանվոր
Հոգևարեկ — հոգնածությունից ջարդված
Ժանդ — դաժան
Մանդարին — չինական ազնվական
Գրաստ — բեռնակիր (անասուն)
Ռիկշի — այն բանվորը, վոր լծվում է մարդատար սայլակին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

III դասարան

Ձմեռվա իրերի ունենումը — Ա. Ս. Պուշկին	7
Ճորտի յերեխաներն ու կալվածատիրոջ շան լակոտները — Վ. Գ. Կարոլենկո	8
Կապիկը և ակնոցները — Ի. Ա. Կրիլով	11
Գործադուլը Պալմայում — Մաքսիմ Գորկի	11
Իլյիչի մանկական և դպրոցական տարիները — Ա. Ի. Ուլյանովա	16
Մեծ պլանի պատմությունը — Մ. Իլյին	24
Յերգ կառուցման — Մաքսիմ Գորկի	30

IV դասարան

Մուտիկն ու աղան (հեքիաթ)	35
Ի. Ա. Կրիլով	39
Ազոաֆն ու աղվեսը	39
Ա. Ս. Պոլեշկին	42
Կալանավոր	43
Վ. Մ. ԳԱՐՇԻՆ	44
Ազգանշան	44
Ա. Գ. ՉԵՆՈՎ	53
Վանկան	54
Վիկտոր ՆՅՈՒԳՈ	58
Գավրուշ	58
ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ	68
Մայիսի 1-ը	69
ԴԵՄՅԱՆ ԲԵԴՆԻՅ	78
«Մինչև հասեղ»	79
ԻՄԲԱՆ	80
Լենինի ու Լի-Չանի մասին	80

Отв. ред. Г. А. Потенц.

Пом. тех. ред. Д. М. Джинибалаян

Издание 343/4513. Об'ем 5 1/4 печ. лист. Статформат А5—148х210. Уполкрайлит 00-11424. Тираж 1250 экз. Заказ № 3695. Сдано в набор 27-VII-1935 г. Подписано в печать 5-IX-1935 г.

Типография им. Стачки 1902 г. Ростов на Дону.

ՀՀ Ազգային գրադարան



NL0372690

Գ Ի Ն Ը 80 ԿՈՊ.
Ц е н а 80 КОП.

Կ Ա Ձ Մ Ը 30 ԿՈՊ.
Переплет 30 КОП.

49951

14.747

На армянском языке

**ХРЕСТОМАТИЯ ПО ЛИТЕРАТУРЕ
ДЛЯ III И IV КЛАССОВ НАЧАЛЬНОЙ
ШКОЛЫ**

**А З О В О - Ч Е Р Н О М О Р С К О Е
К Р А Е В О Е К Н И Г О И З Д А Т Е Л Ъ С Т В О**
Ростов н-Д. Буденновский пр., № 30

Գ Ի Ն Ը Գ Ս Զ Ե Ս Ը
Ռաստով-Դան, Մազովակայա, № 30
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ).